

# ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

ԱՄՍԱԹ ԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՅՈՒՆԱԲԱԲ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻ ԺԱ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ր Ն

1. Խնքագրական .	էջ 1
2. Կեսնի Յիսուսի . — Մասն Ա .	3
3. Կրօնական Դասաւանդութիւն . — Կոչումն Առաքելոց .	10
4. Աւանդութիւն Հայ. Եկեղեցոյ . — Ս. Գրիգոր Լուսաւորիչ .	13
5. Բարոզ յԱնուանակոչութիւն Տեան .	18
6. Պարսկաստանի եւ Հնդկաստանի Առաջնորդութիւնն.	24
7. Թղթակցութիւն . — Նանա՛ Ս. Երուսաղեմէն .	30
8. Մրցանակ :	32

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն  
տեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ,  
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանկ թղթատարաւ .

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան  
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել  
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

# ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

## ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Կ Բ Տ Ք Ի

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց

ԹԻԻ 11

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ 1901

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

**Ի** սկզբան աստ նոր դարուս եւ նոր տարուոյս առաւել քան զառաւել համոզուած ենք թէ մեր սուրբ կրօնի բարգաւաճման եւ զարգացման համար անհրաժեշտ է կրօնաթերթիս ուղղութեամբ պարբերական հրատարակութիւն մի, կամ մի քանի հրատարակութիւնք, որ մեր Եկեղեցւոյ ձայնը ստէպ լսելի առնեն հայ ժողովրդեան . մոռցուած բաներն յիշեցնելով, անձանութները ծանօթացնելով, անհասկանալի կէտերը բացատրելով ու լուսաբանելով :

Ո՛չ աննպաստ եւ անարդար քննադատութիւն լրագրաց, ո՛չ օտար երկրի մէջ հրատարակութեան եւ տպագրութեան դժուարութիւնք, եւ ոչ նիւթական ճնշիչ եւ ամենածանր նեղութիւնք կարող եղան մեր համոզում փոխել կամ զմեզ այս ամենասուրբ գործէն ձեռնթափ լինելու ստիպել :

Նախ գոհանամք զԱստուծոյ՝ անցեալ տարուայ յաջողութեան համար . որով հնարաւոր եղաւ մեզ համար մեր այս գիտցած ճանապարհաւ Ս. Աւետարանը քարոզել եւ Ս. Եկեղեցւոյ պատգամն հաղորդել հայ ընթերցողաց : Երկրորդ՝ շնորհակալ ենք մեր այն պատուական բարեկամներէն որք հաճեցան գործիս սկզբնաւորութեան միջոցին՝ նիւթապէս օգնել հրատարակութեան անհրաժեշտ պէտքերը մասամբ հոգալու : Այս նուիրատուութեանց ցուցալին եւ անցեալ

տարուայ ծախուց հաշիւներն պիտի ի մօտոյ տպագրուին ի գիտութիւն բարեբարաց գործոյս :

Երրորդ՝ շնորհակալ ենք նաեւ մեր բոլոր աշխատակիցներէն որք այնքան սիրով կ'աշխատին ի շինութիւն եւ յօգուտ մանկանց Եկեղեցւոյ : Մենք շատ պէտք ունինք մեր Եկեղեցւոյ հարց ձայնը լսելու , նոցա կրօնական հայեացքներ ու զգացումներն իմանալու : Երբ Ս. Պատարագի միջոցին կ'աղօթենք , «Յիշեա Տէր եւ ողորմեա եւ օրհնեա զամենայն ուղղափառ եպիսկոպոսոնս՝ որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ի մեզ զբանն ճշմարտութեան , » — բնականաբար կրսպանենք որ այն անձինք որ մեր Եկեղեցւոյ գլխաւոր հովիւներ նշանակուած են , ամենէն աւելի ձայն եւ իրաւունք ունին — եւ յուսամք նաեւ շնորհ իյերկնուստ — նաեւ ուսուցանեն եւ համառօտեն մեզ համար զբանն ճշմարտութեան : Ուրախութեամբ կը յայտնեմք որ այս տարի մեր ազգի մէջ քաջ ծանօթ մի քանի բարձրատիճան եկեղեցականք խոստացած են եւ արդէն սկսած են աշխատակցիլ :

Շնորհակալ ենք նաեւ այն լրագիրներէն որք ժամանակին փութացան քաջալերել եւ խրախուսել այս ձեռնարկ : Մասնաւոր շնորհակալութիւն պարտիմք Վենետիկոյ Մխիթարեանց Բազմավեպ ի խմբագրութենէ որ , չնայելով այն կրօնական խտրութիւնը որով այդ պատուական հայ Մխարանութիւն դժբաղդարար կը բաժանէ մեր ազգային եկեղեցիէն եւ բնականաբար կրօնաթերթիս հիմնական ուղղութենէն , դարձեալ ամենայն փափկութեամբ եւ քաղաքավարութեամբ թերթիս գրական ու արտաքին ուղղութեան ու օգտակարութեան վերայ խորհուրդներ եւ թելադրութիւններ յայտնած է , որք մեզ համար անդին են եւ խորին յարգանօք ուշադրութեան պիտի առնուին :

Կրօնաթերթիս անուան փոքրիկ փոփոխութեան պատճառն ըստ ինքեան հասկանալի է , որով ամեն երկրի հայ առանց կասկածանաց եւ երկիւղի պիտի կարենայ յետայսու ընթեռնուլ եւ օգտուիլ ի նմանէ : Ամեն ողջամիտ ընթերցող պէտք է ընդունի որ բառեր ու դարձուածներ ուսուցանել չէ մի կրօնաթերթի նպատակ , այլ կրօնի եւ արեպաշտութեան զգացումն զարթուցանել եւ արծարծել ի հոգիս մարդկան . ուստի այս կամ այն բառի պատճառաւ բարձրագոյն հոգեւոր բարիքն եւ Աստուծոյ փառաբանութիւնը չպիտի խափանուին :

## ԿԵԱՆՔ ՅԻՄՈՒՄԻ

ԻՐ ԾՆԵՆԴԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ ՓԱՌՕՔ Ի ՅԵՐԿԻՆՍ

Ի ԳԵՐ. ՏԷՐ ՂԵՒՈՆԴ ԵՄԻՍԿՈՄՈՍԷ ԵԻՄԱՆԵԱՆ

## Ա

Մարգարեներու Գուշակութիւնները Փրկչի Ծննդեան համար . — Ծնունդ Յիսուսի . — Յիսուս և Որդի Աստուծոյ եւ Աստուած ճշմարիտ :

Ի սկզբանէ եր Բանն եւ Բանն եր առ Աստուած եւ Աստուած եր Բանն . . . Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, :—Յովն. ԳԼ. Ա.

Սրբազան Աւետարանչին այս խօսքերը , վսեմութեամբ հանդերձ , կատարելապէս աստուածային Դրոշմ մը կը կրեն իրենց վրայ ու կը յայտնեն կրկին ճշմարտութիւններ :

Նախ՝ թէ Որդին Աստուծոյ եւ Բանն Աստուած , անսկիզբն եւ անժամանակ , յաւիտեաններէ առաջ ծնած է ի Հօրէ՛ նոյնազոյ բնութեամբ , համագոր Աստուածութեամբ , եւ համագոյ էութեամբ :

Երկրորդ՝ թէ Բանն Աստուած՝ Որդին Աստուծոյ , ժամանակներէ ետքը , մարդկային մարմին առնելով՝ բնակած է մեր մէջը մարդկային բնութեամբ՝ անբաժան իր Աստուածութենէն :

Այս է ահա՛ ճշմարիտ Հաւասքի հիմնական սկզբունքը՝ որուն վրայ հաստատուած է Կրօնքը՝ աշխարհիս սկիզբէն ի վեր . վասն զի « Յիսուս Քրիստոս՝ երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան » (Եբր. ԺԳ. 8) եւ թէ՛ « Հիմն այլ՝ ոք ո՛չ կարէ դնել քան զեղեալն՝ որ է Յիսուս Քրիստոս » (Ա. Կոր. Գ. 11) :

Նոյն ինքն Աստուած , հրաշալեօք իմն , յայտնած է բովանդակ մարդկութեան այս ամենամեծ ճշմարտութիւնը , որպէս զի կատարելապէս ըմբռնելով զԱյն , ճշմարիտ ու հաւատարիմ աւանդապահներն ըլլանք Անոր եւ անկասկած սիրենք զԻնքը ի բոլոր սրտէ եւ անկեղծաւոր հաւատով : Բացատրենք այս ճշմարտութիւնները :

Որդին Աստուծոյ , դարերու ընթացքին մէջ , երբ հա-

ճեցաւ աշխարհ գալ ու մարմնով բնակել մեր մէջ, Իր հրաշալի Մինչդեռէն շատ դարերէ առաջ ծանոյց իր աստուածային Անճը:

Նախ՝ երբ առաջին մարդը՝ իր պատուիրանազանցութենէն ետքը՝ արտաքսուեցաւ Ադին Դրախտէն, Աստուած օձատեսիլ Սատանին յայտարարեց թէ՛ օր մը կնոջ մը Որդին իր գլուխը պիտի ջախջախէ: Առաջին աւետիսն էր այս աստուածակոյս կողմանէ՝ մարդկային ազգի փրկութեան համար:

Ետքը, Փրկչի աշխարհ գալէն տասնեակ եւ աւելի դարերէ առաջ, Աբրահամ, հայր Հաւատոյ, նոյն իսկ Աստուծոյ բերնէն իմացաւ թէ՛ իր սերունդէն պիտի ծնի Այն՝ որով պիտի օրհնուին ազգք եւ ազինք(Մնն. ԳԼ. ԺԷ):

Յակոբ՝ որդւոյն Աբրահամու՝ Իսահակայ զաւակը, վսեմ խօսքերով մարգարէացաւ, իր բոլոր որդւոց առջեւ, ըսելով թէ՛ «Կորիւն առիւծու, Յուդա, ի շառաւիղէ ելեր, որդեակ իմ, ելեր բազմեցար, ննջեցեր իբրեւ զառիւծ եւ իբրեւ զկորիւն առիւծու, ո՛ր յարուցանէ զնա: Մի պակասեցէ իշխան ի Յուդայ եւ մի՛ պետ յերեսաց նորա, մինչեւ եկեսցէ նա՝ Որոյ Իւրն է հանդերձեալքն եւ նա՛ է ակընկալութիւն հեթանոսաց » (Մնն. ԽԺ. 9, 10): (\*)

Դանիէլ հաստատեց սոյն ժամանակամիջոցը՝ տարիներն հաշուելով, եւ յայտնեց թէ՛ Մեսիան աշխարհի բոլոր մեղքերը պիտի քաւէ եւ պիտի կոչուի Սուրբն Սրբոց (Դան. ԳԼ. Թ):

Միքիա ցոյց տուաւ այն վայրը՝ ուր պիտի ծնանէր այս նոր Իշխանը (Միք. ԳԼ. Ե. 2):

Եսայի նախատեսեց ուրիշ սքանչելիք մը՝ մարդկային իմացականութենէ գեր ի վեր, թէ՛ Կուսէ մը պիտի ծնի Մեսիան, հետեւեալ կենդանի եւ ուշադրաւ խօսքին մէջ ամփոփելով իր տեսութիւնը՝ «Տացէ ձեզ Տէր ինքնին նշան: Ահա՛ կոյսն յղասցի եւ ծնցի որդի եւ կոչեսցին

(\*) Մեր Սրբազան յօգուածագիրն այս խօսքերն առած է վկանեալս Աստուածաշունչէն: Կ.Պօլսոյ Աստուածաշունչն այսպէս ունի. «Մինչեւ եկեսցեն նմա հանդերձեալքն, եւ նա է ակընկալութիւն հեթանոսաց»: Էջի ստորեւ մի ծանօթութիւն եւս կըլաւելու՝ եբրայական բնագրի բառացի թարգմանութիւնը նշանակելով. «եկեսցէ Սելով»: որ կընշանակէ «Խաղաղատար» կամ «Խաղաղութիւն բերող»: Մեր նախնեաց թագմանութիւն որ գլխաւորաբար յայն յօթանասնից թարգմանութենէն եղած է՝ թէպէտ եբրայական բնագրի բառացի նշանակութենէն մի քիչ կըլաւորեբի, բնագրի միտքն պարզաբար եւ լուսաբանելով կ'արտայայտէ:

գանուէն նորա էմմանուէլ » (Եւ. է. 14), էմմանուէլ՝ որ կը թարգմանուի « Աստուած մեզի հետ » :

Նոյն մարդարէն կանխաւ հռչակեց ծնեալ Աստուծոյ — Մեսիայի հրաշալի գործերն ու բարերարութիւններն՝ ըսելով . — « ... Ինքնին եկեացէ եւ փրկեացէ զմեզ : Յայնժամ աչք կուրաց բացցին եւ ականջք խլից լուիցեն . յայնժամ վազեացէ կազն իբրեւ զեղջերու եւ պարզ լիցի լեզու ծանրախօսաց » (Եւս. ԼԵ. 5, 6) :

Եւ ո՞վ կրնայ ուրանալ բոլոր այն մարդարէութիւններն՝ որոնց մէջ կը պատկերանայ Յիսուսի Տեառն մերոյ բովանդակ կեանքը :

Աշխարհի թագաւորներ, աշխարհի մեծամեծներ եկած գացած են աշխարհ, կու գան դեռ ու կ'երթան . եւ սակայն ո՞ր թագաւորն է այն, աշխարհի ո՞ր իշխանն՝ որուն կեանքն ու կենցաղն գուշակուած ըլլայ դարաւոր ժամանակներէ առաջ : Մարդկային տեսութիւնն՝ անզօր է՝ նախատեսելու համար այդպիսի ապագայ մը, ո՛չ թէ գուշակելու հազարաւոր տարիներէ ետքը գալիքը . նոյն իսկ, աչքի առաջեւ, նորածին երախայի մը նկատմամբ ըսելու համար թէ՛ ի՛նչ պիտի ըլլայ անոր ապագայ կենցաղը, թէ՛ ո՞րքան կեանք պիտի ունենայ, երջանի՛կ պիտի ըլլայ թէ՛ ապերջանիկ, պիտի յարգուի՞ ամենէն թէ՛ ո՛չ :

Մարդկային տեսութեան հանդէպ՝ նոյն իսկ ամենամերձ ապագայ մը՝ մատեան մըն է կնքուած, — եւ հնագոյն ժամակներու որպիսի՞ ապագաներ, առա՛նց ակնկալուելու, առանց սպասուելու, դարերէ առաջ կատարուած, սակայն դարեր անցնելով կորսուած ու անհետացած են : Դարաւոր ժամանակներէ առաջ՝ զոր մարդկային միտքը չէ՛ կարող ըմբռնել, բան մը նախատեսել, աստուածային յայտնութեա՛մբ եւ եթ կարելի է :

Կարգացէք Հին Կտակարանը, ուսումնասիրեցէ՛ք բոլոր մարդարէութիւնները, կարգացէ՛ք նաեւ Աւետարանը ... եւ Մարդարէներու բերնով՝ աստուածային յայտնութեանց որպիսի՞ հրաշալի ներդաշնակութիւն մը պիտի գտնէք Յիսուսի կեանքին ու Անոր երկնային խօսքերուն ու գործքերուն հետ : Հին Կտակարանը կեղծիք մը չէ՛ անշուշտ . Հրէից քով իսկ, որ Յիսուսի անհաշտ ու խստապարանոց թշնամիներն են, պահուած է ա՛յն՝ իբրեւ անգնահատելի գանձ մը ու կը պաշտուի անոնցմէ : Ուրեմն սպասուած այդ Մեսիան, գուշակուած այդ Փրկիչն էր՝ որ աշխարհ

պիտի գար՝ Կուսէ մը ծնանելով Աստուած, Հզօր եւ Իշխան խաղաղութեան (Եւ. Թ. 6), վասն զի բովանդակ մարդկութիւնն իսպառ կորուսած էր բարոյականը. վասն զի բարուց ապականութիւնն իր ծայրայեղութեան հասած՝ Օրէնք եւ մարգարէութիւնք ա՛յլ եւս մեռեալ տառեր դածեր էին: Աստուծոյ անունը բոլորովին մոռցուած էր. կուպաշտութիւն, անասնապաշտութիւն, հեթանոսական մոլորութիւնք, ա՛սոնք էին գրեթէ առ հասարակ մարդկային ազգի կեանքն ու հաւատքը: Եսայեայ պատգամը լրումն առած էր. « Ժողովուրդ անհաւան, որդիք սուտք » չէին ուզեր լսել Աստուծոյ օրէնքները. ինչ որ գուշակուած էր ժամանակին եւ արձանագրուած « ի գիրս եւ ի տախտակի » առհասարակ ամէնուն բերանն էր. « ամէն » ք կուզէր լսել ա՛յլ մոլորութիւն » (Եւ. Լ. 8. 9. 10). հետեւաբար անհնար էր մարդկային ազգի ուղղութիւնը: Պղատոն՝ Սոկրատի աշակերտը, Քրիստոնէութեան գաղափարները շօշափող այն բարձր իտէալի մարդը՝ հանդէպ մարդկային բարուց ապականութեան, ըսած էր — « Պէտք է որ աստուած մը իջնէ երկինքէն՝ որպէս զի մարդկութիւնը ուղղուի » — . ա՛յնչափ զգալի եղած էր մարդկային ազգի վերանորոգութիւնն, եւ հարկ էր որ մարգարէներու գուշակութիւնները կառարուէին ի փրկութիւն ողջոյն տիեզերաց :

Եւ ահա՛ Հրէաստանի մէջ՝ Բեթլեհեմէ քիչ հեռուն՝ դաշտ մը՝ ուր խաչներու հովիւներ իրենց հօտը կը պահպանէին, գիշերուան խոր խաւարի ժամանակ, յանկարծ երկնային լուսով մը կը լուսաւորուի, կ'իջնէ երկնային պատգամաբեր հրեշտակը . Աստուծոյ փառքը կը ծագի եւ կը ընչէ դարերէ ի վեր սպասուած աւետաւոր ձայնը՝ անաւոր սարսափի մը մէջ — « մի՛ երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ՝ որ եղիցի ամենայն ժողովրդեան. զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի », եւ կը շարունակէ ձայնը՝ ճանչցնելու համար թէ ու՞ր եւ որպիսի՞ էր՝ այդ Փրկիչը — « Գտանիցէք մանուկ՝ պատեալ ի խանձարուրս եւ եղեալ ի մուր » (Ղուկ. Բ. 10, 11, 12):

Գուցէ հանդէպ ա՛յսքան խոնարհութեան ու նուաստացման Փրկչին Յիսուսի՝ յուզուին մեր մտքերը՝ ի տես տխուր Մսուրի մը ու՛ր, իբրեւ անօգնական, կըննջէ Մանուկն Աստուածային՝ աղքատիկ Մօր մը Կուսական գրկացը վրայ,

այն Երկնային մանուկը՝ որ անքուն աչօք կը պահէ զիս-  
րայէլ . . . . — Վրդովին մեր սրտերը՝ խորհելով թէ՛ ո՞չ ա-  
պաքէն Աստուած մը՝ Փրկիչ տիեզերաց, ի վեր քան զԹա-  
գաւորս աշխարհի, փառօք ու շքեղութեամբ պէտք էր ե-  
րեւնար . ինչու՞ համար երկնից եւ երկրի միահեծան Տէրն  
ու Արարիչը՝ Թագաւորաց Թագաւորը, Հօրն ու Իշխանը՝  
մտերի մը մէջ՝ յարդերու վրայ պիտի հանգչէր, Այն՝ զոր  
Սերովբէք եւ Քերովբէք կը բարձրացնեն իրենց բոցափառ  
թեւերուն վրայ, Այն՝ Որուն Երկինք են Սթոռ եւ եր-  
կիր՝ Իր ստփերուն պատուանդան . . . — Եւ սակայն այսպէ՛ս  
էր Աստուծոյ բացարձակ կամքը : Մայրայեղ խոնարհու-  
թեամբ անկեալ մարդկութիւնը բարձրացնել՝ ամենամեծ  
հրաշալիքն էր Իր աստուածային անբացատրելի Կթութեանն  
ու Ողորմութեան :

Մարդիկ, ամէն ժամանակի մէջ՝ երկու դասակարգի բաժ-  
նուած են — հարուստի եւ աղքատի — մարդկային ունայ-  
նամտութիւնն ու սնափառութիւնը, մանաւանդ հին դա-  
րերու մէջ, վիճակի եւ աստիճանի անհաւասարութիւնը՝  
փարթամութեան մէկ սկզբունքը համարած էին : « Անի-  
ծեա՛լ ըլլայ աղքատը » կ'աղաղակէր այն՝ որ հարուստ էր .  
իսկ յաղթականը՝ ի ձայն փողոյ հռչակելով իր փառքը,  
« անիծեա՛լ ըլլայ յաղթողը » կը գոչէր : Իրաւունքը հրօ-  
րագունին էր միշտ՝ որով արդարութեան, զթութեան ու  
մարդկութեան նուիրական իրաւունքներն ու պարտքերը  
յաւէտ ոտնակոխ եղած էին աշխարհի մեծամեծներէն :

Երբ գուշակուած Մեսիան աշխարհ եկաւ, մարդկային  
ազգի մեծագոյն մասը ծառայութեան լուծին տակ ընկճուած  
էր : Մեծին Հռովմի, քաղաքակիրթ եւ նոյն ատենուան  
ամէնէն փառաշուք այդ քաղաքին մէջ, անհամար բազմու-  
թիւն գերեաց կրճեճէր սոսկալի տառապանքներու մէջ .  
ու՛ր թողունք վառարանն իմաստութեան Աթէնքը, աղա-  
տութեան սիրահար այն մեծահոշակ քաղաքը՝ որ իր քսա-  
նըչորս հազար ազատաւիտ քաղաքացիներուն հանգէպ՝ չորս  
հարիւր հազար գերիներ կը պահէր իր մէջ :

Եկաւ Քրիստոս՝ ու խօսքով քարոզելէ առաջ, օրինակաւ  
ու գործով ցոյց տուաւ իր քարոզութիւնները, որովհետեւ՝  
բարոյականի ճշմարտութեամբ, ըսելը ոչինչ է . ընելը ա-  
մէն ինչ է : Որդին Աստուծոյ, նոյն ինքն Աստուած,  
ինքզինքը յետին թշուառներու կարգը զբաւ եւ իր երկրպա-  
գելի Անձին վրայ առաւ նախատուած ու անարգուած

աղքատութեան ծանրութիւնն ու անոր ցնցոտիները : Ծնաւողորմելի Այրի մը մէջ եւ անասուններու Մսուր մը իր որբանը եղաւ եւ այնու՝ զօրաւոր կերպով յայտնեց ընդհանուր աշխարհի ու սովրեցուց այն կարեւոր ճշմարտութիւնը թէ՛ աղքատութիւնը մոլութիւն մը չէ՝ ո՛չ ալ անպատուութիւն , այլ , ընդհակառակն , հարստութեանէ աւելի բարձր , աւելի գերիվեր , աւելի՛ սուրբ է եւ արժանի Սիրոյ :

Ինքը՝ Յիսուս , սարսափը՝ անողոք մեծամեծներու եւ սփոփիչն՝ սրտով ու հոգևով աղքատներու . ամբողջ երեսուն տարի աղքատօրէն ապրեցաւ աղքատիկ ծնողաց քով . ու երբ հնչեց ժամը՝ սկսելու համար մարդկային փրկութեան աստուածային գործը՝ մէկ քանի աղքատիկ պալիւտացիներու հետ ման եկաւ , անոք եւ անօգնական , ամբողջ Յուդայի երկիրները՝ ողորմութեամբ ապրելով եւ հիւրընկալուելով . երբեմն ալ ուտելու բան մը ու գլուխը դնելու՝ տեղ մը չի գտնելով , որով իրաւունք ստացաւ ըսելու՝ — « Աղուեսուց որջք գոն եւ թռչնոց երկնից բոյնք , այլ որդւոյ մարդոյ ո՛չ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր » (Մատ. Ը. 20) : Վերջապէս կտոր մը փայտի վրայ աւանդեց իր աստուածային Ս. Հոգին՝ մերկ ու ծալաւի : Իր բովանդակ կեանքը՝ Բեթլեհեմի մտուրէն մինչեւ Գողգոթայի խաչը , ծայրայեղ աղքատութեան տիպարն հանդիսացաւ :

Իր կենաց ընթացքին համապատասխան եղան եւ իր Աւետարանական Գարողութիւնները : Առաջին խօսքը՝ որ թուաւ իր աստուածային Շուրթէն՝ փչրեց , անհետացուց անէժքը հնադարեան՝ որուն ներքեւ ընկճուած էր խեղճ աղքատը . լերան բարձունքներուն վրայ աղաղակեց . « Երանի՛ աղքատաց հոգևով զի նոցա է արքայութիւն երկնից » (Մատ. Ե. 3) . անէժք թօթափեց անողոք մեծամեծներու գլխուն , շանթի նման իջաւ աշխարհի փարթամներուն վրայ ու որոտաց — « Վա՛յ ձեզ մեծատանցդ , զի ընկալայք զմխիթարութիւն ձեր » (Ղուկ. Զ. 24) . վասն զի յաւիտենական երջանկութիւնը ա՛յլ եւս ձեզի համար չէ՝ — « Դիւրին է մալիոյ ընդ ծակ ասղան մտանել , քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ » (Մատ. ԺԹ. 24) . . . Աստուածային վարդապետութեան ի՛նչ հիանալի յայտարարութիւններ՝ որոնք , իբրեւ յաւիտենական անջնջելի դրոշմ , պիտի մնան միշտ անողոք հարուստներուն ճակատներուն վրայ :

Եւ արդարեւ հարստութեան ոգին՝ աշխարհի երջանկութեամբ ու կոյր բաղդի կատարեալ յաջողութեամբ , մարդ-

կային բուն ցանկութեանց ու վայրագ կրից յագուրդ տալու եւեթ կըծառայէ, ապականութեան ու պղծութեան բորբոքուած վառարան մըն է այն, եւ մարդիկ՝ երբ հարուստ են, իրենց խղճի պարտականութիւնն ու առ Աստուած եւ առ ընկերն իրենց անձնութիւնը յաճախ իրենց փառացն ու յղփութեանը կ'ընծայեն . . . :

Երկար կ'ըլլայ Ս. Գիրքէն բազմաթիւ օրինակներով հաստատել այս անվիճելի ճշմարտութիւնը. բաւական է միայն միտք բերել Աւետարանի աղքատ ու վերաւոր Ղազարոսը՝ հանդէպ յղփացեալ մեծաոունին՝ որ «ագանէր բեհեզս եւ զծիրանիս» (Ղուկ. ԺԷ. 19). եւ յիշել Փրկչի խօսքը՝ հանդէպ խոժոռադէմ փարթամին — «Զիա՞րդ դժուարին է, որ զինչսըդ ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ (Մատթ. Ժ. 23) :

Վերջապէս Գրիստոս աշխարհ եկաւ հարստութեան ամբարտաւանութիւնը կործանելու, աղքատութեան խոնարհութիւնը բարձրացնելու, քաղցեալները բարութեամբ լիացնելու ու մեծատուններն ունայն արձակելու : Տակաւին երկոտասանամեայ Մանուկ, Տաճարին մէջ, ընչաքաղց Փարիսեցիներու բազմութեան առջեւ, զա՛յս եւեթ քարոզեց ու յայտարարեց՝ մարգարէներու ապացոյցներով թէ՛ ինքն է Օծեալն Աստուծոյ՝ որ աղքատներուն աւետիս, եւ մեծատուններու բռնաւոր լուծին տակ ընկճուողներուն ազատութիւն քարոզելու համար աշխարհ եկած է :

Յիսուս՝ աղքատութեամբ եւ առ կարօտեալս ցոյց տուած բարերարութեամբ միայն յայտարարեց թէ ինքն է Աստուած եւ Որդի Աստուծոյ : Որքան աստուածային էին իր խօսքերը՝ լի գերագոյն իմաստութեամբ, այնքան նաեւ հրաշալի էին իր գործերը՝ լի աստուածութեամբ : Գնացէք — ըսաւ Յովհաննու Մկրտչի աշակերտներուն — գնացէ՛ք պատմեցէ՛ք Յովհաննու ինչ որ ձեր աչքերովը տեսաք, «կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, խուք լսեն, մտեալք յառնեն, աղքատք աւետարանին եւ երանի իցէ՛ որ ո՛չ գայթակղեցի յիս» (Ղուկ. Է. 22, 23) : Որքան համապատասխան էին այս գործերը մարգարէներու գուշակութեան, եւ սակայն Յիսուս ո՛չ թէ միայն իր բարերար գործերով, այլ առաւել եւս իր գործերուն մէջ ցոյց տուած եղանակաւն իսկ յայտարարեց՝ թէ ինքն է Աստուած :

Ինչ որ էր Բանն Աստուած՝ արարչագործութեան ժամանակ՝ երբ միայն «եղիցի» ով մը ոչինչէն Տիեզերք մը ստեղծեց, նոյնն էր՝ երկրի վրայ իր բարերար հրաշա-

գործութեանց ժամանակ՝ իբրև Որդի մարդոյ: — «Կամիմ, սրբեաց», ըսաւ բորոտին եւ իսկոյն բժշկուեցաւ: «Ա՛ն զմահիծս քո եւ ե՛րթ», ըսաւ անդամալոյծին, եւ անմիջապէս ոտքի ելաւ: Սաստեց հողմոց եւ ալեաց, եւ իսկոյն հանդարտեցան: «Աղջի՛կ դու, քեզ ասեմ, արի,» ըսաւ Նային քաղաքի այրի կնոջ մեռեալ աղջկան, եւ իսկոյն յարութիւն առաւ:

Վերջապէս Ա՛յն որուն այնքան մարտիրոսներ իրենց արինը զոհեցին. Այն, որ մեզի համար աշխարհ եկաւ եւ մեր փրկութեանը համար իր Անձը զոհեց, Այն՝ որ մեռեալ մարդկութեան կեանք ու գերեալ կեանքի ազատութիւն շնորհեց, Աստուած է Այն, Որդի Աստուծոյ եւ Որդի մարդոյ: Երկինք եւ երկիր պիտի անցնին բայց Անոր Խօսքերը չի պիտի անցնին: Երանի՛ անոնց՝ որ կը հաւատան Յիսուսի եւ կընտեսեն Անոր Խօսքերուն ու Գործերուն: Երանի՛ անոնց որ զՏէրն կենաց եւ մահու, զՅիսուս կըսիրեն. վասն զի Այն է միայն մեր երջանկութիւնն ի կեանս եւ մեր կեանքն ի յաւիտեանս:

## ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

### ԿՈՉՈՒՄՆ ԱՌԱՔԵԼՈՑ

Յիսուս կոչեց իւր առաքեալներն հետզհետէ, մի առ մի, կամ երկու երկու ոչ թէ միանգամայն: Հարկաւ նա յառաջագոյն գիտեր թէ ովք՛ր պիտի կոչեր և ե՛րբ և ու՛ր պիտի գտներ զնոսաւ:

1. Յիսուս կըկոչէ զմեզ այժմ՝, ինչպէս յարմար կըդատի:
2. Նա կըկոչէ զմեզ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ որ իրեն հեռեինք:
3. Մեր պարտքն է անմիջապէս հնազանդիլ, հոգ չէ թէ ի՛նչքան մեծ զոհողութիւն անելու հարկ լինի:

Քրիստոսին հետևող առաջին երկու աշակերտք կամ առաքեալք էին Յովհաննէս և Անդրէաս: Սոքա երկոքին էին արդէն աշակերտք Յովհաննու Մկրտչի, որ մեկ օր Յիսուսին ակնարկելով՝ ասաց. «Ահա գաւն Աստուծոյ որ բառնայ զմեզս աշխարհի:» Յաջորդ օրն երբ Յիսուս կրկին երևեցաւ Յովհաննու կեցած տեղերը, Ս. Յովհաննէս Մկրտչի նոյն բացազանչութիւնը կրկնեց, որով վերոյիշեալ երկու աշակերտներ, այսինքն, Յովհաննէս և Անդրէաս, որ ընկերներ էին. Թողին զՄկրտչին, թերևս իւրեանց վարդապետի արտօնու թեամբ, և Յիսուսին հետևեցին: Տես Յովն. Ա. 37: Ս. Յովհաննէս

իւր Աւետարանի մէջ կը յիշէ Անդրէասի անունն, բայց իւր իսկ անունը չի տար: Միայն բնական հետեւութեամբ է որ կ'եզրակացնենք թէ Յովհաննէս էր Անդրէասի ընկերն: Արդէն իւր ամբողջ Աւետարանին մէջ Ս. Յովհաննէս, ի համեատութենէ, բնաւ չի յիշեր իւր անունն:

Ուշագրութեան արժանի է աստ Ս. Յովհաննու խոնարհութիւնն, — թէ պէտեւ Յիսուսի ամենէն աւելի սիրուած աշակերանէ, բայց տեսէք ո՛րքան համեստ ու ամօթխած:

Խրատական. — Յիսուս զմեզ ևս երբեմն կը կոչէ, ոչ թէ այնպէս ինչպէս զՅովհաննէսն և զԱնդրէասն կոչեց. բայց դարձեալ մեր առօրեայ կենաց նեղութեանց և դժուարութեանց մէջ յաճախ կը ըսենք Յիսուսի ձայնը. « Թող զամենայն և ե՛կ զկնի իմ: » Անդրէաս չբաւականացաւ զՅիսուս դտած լինելով. նա դնաց իւր Սիմոն եղբօրն ևս պատմեց թէ Մեսիայն, որ է Քրիստոսն, դտած է, եւ զայն համոզեց դնալ հետեւիլ Յիսուսին. Յովն. Ա. 41:

Յիսուս արդէն կրողասեր Սիմոնին, քանզի նա գիտեր ամենայն ինչ որ գալոցն էր. ուստի զայն տեսնելուն պէս՝ անմիջապէս կոչեց նորա անուամբն, որոյ վերայ աւելցուց նաև կեփաս, կամ Պետրոս անունն, որ կը նշանակէ « վէժ », կամ « քար »:

Խրատական:— 1. Աշխատիլ ուրիշներ ևս բերել առ Քրիստոս: Եթէ միայն ամեն քրիստոնեայ հաւատացեալ՝ ուրիշ մէկն ևս ջանար գտնել և տանիլ առ Քրիստոս, այսինքն, համոզել սր Քրիստոսի պատուիրանաց և Եկեղեցւոյ օրինաց համեմատ կենցաղավարի, յայնժամ աշխարհքս ի՛նչքան պիտի տարբերեր իւր ներկայ դրութենէն:

2. Իւր իսկ արեւակից եղբայրն էր զոր Անդրէաս բաւաւ առ Քրիստոս: Ուստի նախ պարտիմք մեր տան և մեր շրջակայից մէջ և ապա աւելի ընդարձակ շրջաններու մէջ բարիս գործել, ընկերսրութիւն և մարդասիրութիւն ցոյց տալ:

3. Ս. Պետրոս արդարև առաքելական դասու փաստաբանն ու առաջնորդն էր: Այս մասին իւր եղբայր Անդրէասին գերազանցեց: Սակայն Ս. Անդրէաս էր առաջին աշակերտն կամ առաքեալն, վասն զի նա ամենէն յառաջ կոչուեցաւ. և յիրաւի եթէ Ս. Անդրէաս չլինէր, թերևս և ոչ Ս. Պետրոս լինէր: Յորմէ կ'ուսանիմք որ յաճախ խոնարհաբայնքն նոյնքան պիտանի և օգտակար են որքան աւագադոյնքն և բարձրաստիճանքն:

Մի և նայն օրն երբ Ան բէաս և Պետրոս կոչուեցան յաշակերտութիւն, Տէրն մեր Յիսուս դնաց ի Գալիլիա և կոչեց զՓիլիպպոս որ

իրեն հետևի. Յովն. Ա. 44: Փիլիպպոս Բեթսայիդա քաղաքէն էր, որ տեղէն Անդրեաս և Պետրոս ևս եկած էին:

Տեւեխ. 1. Ինչքան տաժանելի և բազմաշեխառ կեանք կրվարէր Տէրն մեր՝ միշտ շրջելով տեղէ տեղ, քաղաքէ քաղաք:

2. Սակայն այդ ամեն աշխատութեան և յոգնուածեան նպատակն միշտ էր մարդկային ազդի փրկութիւնն:

Կերևի որ Ս. Փիլիպպոս եղաւ պատճառն Ա. Բարթողիմէոսի կամ Նաթանայելի կոչման, որ Գալիլեացւոց կանա քաղաքէն էր: Նաթանայելի կոչումն կարի նշանաւոր է, քանզի իսկզբան Գրիստոսի մասին կասկածներ ունէր՝ և նազարեթէն ծագում առած լինելու էր: Երբ Ս. Փիլիպպոս կրկնաւորէր նմա թէ ի Մովսիսէ և ի մարգարեից գուշակուած Մեսիայն եկած է ի նազարեթէ, ուր Յիսուս մեծցած էր, Նաթանայել կրկնատասխանէ. «Իսկ ի նազարեթէ մա՞րթ ինչ իցէ բարոյ իմիք լինել»: Որում Փիլիպպոս կրկնատասխանէ. «Եկ և տես»: Խրատակամ. — Արտաքին տեսքէն չը պիտի գտեսնք ներքին իրն:

Յիսուսի հետ ունեցած առաջին տեսակցութիւնը յաջող արդիւնք ունեցաւ. վասն զի Տէր Յիսուս ինքզինք անմիջապէս յայտնեց Նաթանայելին իբրև Մեսիա կամ Որդի Աստուծոյ՝ մարգարէարար խոսելով նորա բարուց վերայ «Իբրև իսրայելացի, յորում նենդութիւն ոչ գոյ»: Նաթանայել զարմացաւ որ Յիսուս կրճանաչէր զնա, մինչդէռ ինքն Նաթանայել բոլորովին անծանօթ էր Յիսուսին: Ուստի Յիսուս վտասացոյց թէ զայն տեսած էր թղենույ ներքև տակաւին Փիլիպպոսէն չկոչուած: Այսու Նաթանայել համոզուեցաւ որ իւր հետ խօսողն էր իրապէս, «Որդի Աստուծոյ և թագաւոր իսրայելին»:

1. Յիսուս զմեզ միշտ կըտեսնէ, հոգ չէ թէ ու՛ր եմք, կամ ի՛նչ կըգործեմք:

2. Եթէ այս ճշմարտութիւնը միշտ մեր մտաց մէջ պահեմք, մեզ համար շատ օգտակար կըլինի և մեր կենցաղավարութեան մէջ զգուշութիւն կըտորվեցնէ:

Ամենէն վերջ Տէրն մեր հրամայեց Ղեւի մաքաւորին որ իրեն հետևի: Այս կոչումն տեղի ունեցաւ Կափառնաում քաղաքի մէջ, ուր Ղեւի, կամ ինչպէս յետոյ կոչուեցաւ, Մատթէոս, մաքսապետութեան պաշտօն կրվարէր: Տես Մատթ. Թ. 6:

Գրիստոսի թնայեալ առաքելոց պատմութիւնը աւանդուած չէ Ս. Աւետարանի մէջ. բայց գիտենք որ նոքա ամենեքին, Յուդաս Իսկարիօտացիէն դուրս, հաւատարիմ թնային իւրեանց վարդապետին: Խրատակամ. 1. Ձանալ ամեն կերպով Յիսուսին հիտելի. ուրիշներին ծառայելով, օգտակար հանգիստանալով, Յիսուսին ծառայելու յօտարութիւննին ցոյց տալ, քարոզել բանիւ և բարի օրինակաւ:

2. Յիսուսին հետևելն արգարև գոտարին է, բայց ջերմեանդ աղօթիւք և Ս. Հոգւոյն օժանդակութիւնն հայցելով՝ կարելիցէ առնել զայդ:



## ԱՐԱՆԳՈՒԹԻՒՆ ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ (Շար)

1. Խեղագարուքիւն Տրդատայ. — Ս. Հռիփսիմեանց նահատակութիւն Տրդատայ մտաց եւ խղճի վերայ մի ծանր եւ ճնշիչ ազդեցութիւն գործեց: Վեց օր անհնարին տրտմութեան մէջ անքուն ու անհանգիստ մնաց: Ոճիբը գործելէն յետոյ Տրդատ խորին վիշտ կըզգայ որ այլ եւս չկայ այն հրաշագեղ եւ ազնուաբարոյ կոյսն Հռիփսիմէ զոր ինքն այնքան անձկանօք եւ տափամաք սիրած էր, բայց իւր կատաղութեան միջոցին սպանանել տուած էր: Հռիփսիմէի նկատմամբ իւր ունեցած դիտումների խայտառակ անյաջողութեան մատնուիլն Տրդատի պէս հսկայական ուժով օժտեալ մի թագաւորի համար անտանելի անօթոյ եւ տրտմութեան պատճառ եղած էր, նորա արքայական հրամանի եւ ոլիմբական խաղերի մէջ այնքան յաղթող եւ քաջ մի ախոյեանի հպարտութիւն խորապէս վիրաւորուած էր: Միւս կողմէ երբ այլ եւս իւր ստորին ցանկութեան առարկայն մահուամբ վերցուած էր, այդ սուրբ կուսանաց ժուժկալ եւ արիասիրտ դիմադրութեան յիշատակն Տրդատայ անհուն հիացումը կըշարժէ, ոչ թէ միայն այդ սրբանուէր կուսանաց վերայ, այլ առաւելապէս այն սուրբ կրօնի վերայ որ այդ կուսանաց արիութեան միակ շարժառիթն ու զօրութիւնն էր. եւ թերեւս ի ներքուստ կըզգար նաեւ որ իւր գործած ոճիբն այդ անմեղ սրբուհեաց դէմ լինելէ աւելի՝ ոճիբ մի էր ընդդէմ Բարձրելոյն, որոյ դէմ այսքան ժամանակ կուրօրէն կըմարտնչէր, եւ փոխարէնն կըմեծարէր կուռքերն ու շաստուածներն, որոց ոչնչութիւնն այժմ հետզհետէ կըտեսնէր:

Այսպիսի խառն ի խուռն եւ բազմադիմի մտահոգութիւն Տրդատի պէս հուժկու բնաւորութեան վերայ բնականաբար այն խոր տխրութիւնն ու անհնարին տրտմութիւնը բերեց, որ վեց օր անդադար գիշեր ցերեկ կըտուայտէր ու կըտանջէր զնա: Տրդատ ուզեց տեղափոխութեամբ զբօսանքով իւր միտքը կազդուրել եւ այդ ինքնատանջ բանտէն ազատուիլ: Հրամայեց որսի մեծ պագրաստութիւն տեսնել, եւ իւր նախարարներով եւ զօրքերով ճանապարհ ինկաւ. թագաւորն պալատէն եւ մայրաքաղաքէն կըհեռա-

նար, սակայն իւր խայթահար խղճէն չէր կարող բաժանուել: Քաղաքէն հաղիւ հազ դուրս ելած էին երբ Ասաուծոյ դատաստանն եկաւ արքայի եւ նորա նախարարաց վերայ: Յանկարծակի մի տեսակ խելագարութեամբ բռնուեցաւ որ իբրեւ գայլախտութիւն ծանօթ է բժշկաց:

Հին Կտակարանի պատմութեան մէջ արդէն ծանօթ է Նաբուգոդոնոսոր թագաւորինոյն արտով պատուհասուիլն, երբ նա իւր անձնական ճոխութեամբ եւ գործերով կրմեծամտէր, յորժամ «ի մարդկանէ հալածեցաւ, եւ խոտ իբրեւ արջաւ ուտէր, եւ ի ցօղոյ երկնից մարմին նորա ներկաւ, մինչեւ վարսք նորա իբրեւ զառիւծուց մեծացան, եւ եղնգունք նորա իբրեւ զթռչնոց:» (\*) Նոյնպէս Տրդատ իւր խելայեղ գրութեամբ ինքզինքն իբրեւ վայրենի խոզ կարծելով՝ «ընդ նոսա ի մէջ նոցա երթեալ ընակէր»: Իւր զգեստն պատառելով անտառների եւ դաշտերի մէջ եւ լեւրանց վերայ կրթափառէր, խոտով ու անպիտան բոյսերով կրկերակրուէր, եւ մինչեւ իսկ իւր մարմինն եւս խածատելով կրվիրաւորէր կրվնասէր: — Նոյնպէս Վաղարշապատի բնակիչներէն ոչ սակաւք այլ եւ այլ աստիճան ցնորութեամբ եւ խելագարութեամբ բռնուեցան. մասնաւորապէս թագաւորի ընտանիքն եւ պալատականք նոյն արտովը վարակուեցան, «եւ անհնարին սուգ վասն հարուածոցն լինէին:»

2. Ս. Գրիգորի եւն ի Վիրապէն. — Մինչդեռ այս հարուածներ կրտարածուէին եւ օրըստօրէ կրծանրանային հայ արքունեաց եւ Վաղարշապատու բնակչաց վերայ, Տրդատայ քոյրն Խոսրովիդուխտ աստուածային տեսլեամբ կ'իմանայ որ Ս. Գրիգոր տակաւին կենդանի է Խոր վիրապին մէջ, եւ հայ ժողովուրդն այդ սոսկալի վիճակէն ազատողն պէտք է լինի Ս. Գրիգոր՝ իւր աղօթիւք եւ բարեխօսութեամբ առ Աստուած: Խոսրովիդուխտ կրպատմէ իւր տեսիլն Հայոց նախարարաց, այլ սոքա՝ անկարելի համարելով որ մի մարդ կարենայ մերձ տասն եւ հինգ տարի այդ ստորերկրեայ վայրի մէջ կենդանի մնալ՝ կրծաղրեն զնա եւ կրսկսին կասկածիլ որ ինքն Խոսրովիդուխտ եւս սկսած է ընդհանուր հարուածի արտովն բռնուիլ: Սակայն տեսիլքն կրկին եւ կրկին անգամ երևեցաւ «եւ հինգ կնեաց սպառնալեօք. զի եթէ ոչ պատմեսցէ ստէպ ստէպ, մեծամեծ տանջանս ընկալցի. եւ հարուածք մարդկան եւ

(\*) Դաւեիկ Դ. 25, 30.

Թագաւորին եւս քան զեւս սաստկացի մահու եւ պէսպէս տանջանօք :»

Ի վերջոյ նախարարք համոզուեցան գէթ փորձելու համար յիւրեանց մին՝ զաւագ նախարարն Օտա յղել Արտաշատ : Արտաշատի բնակիչք եւս նոյնպէս անվտան էին Օտայի յաջողութեան վերայ, զի նոքա զարմացեալ առ հասարակ ասէին . Ո՞ գիտէ թէ կայցէ, զի բազում ամբ են զի ընկեցին զնա անդր : Զիարդ եւ իցէ, հաստ ու երկայն չուաններ կախելով իւր վերապն, կոչեցին եւ հրաւիրեցին զԳրիգոր որ դուրս գայ : Օտա եւ իւր օգնականք հիացան ապշեցան երբ չուանր շարժեցաւ . եւ յորժամ երկնային խնամովք կ'նշանի մնացած հնգետասանամիայ բանտարկեալն վեր հանին, «տեսին զի թխացեալ էր մարմինն նորա իբրեւ զածուղ սեւացեալ :» Ժողովրդեան հիացումն ու զարմացումն անչափ ու անսահման էր երբ զԳրիգոր տեսան : Ս. Գրիգորի արդարացման եւ քրիստոնէական կրօնի ամենազօր փաստն էր նորա անակնկալ կենդանութիւնն՝ մարդկային մարմնոյ եւ կենաց այնքան աննպաստ պարագայից ներքոյ : Թագաւորն եւ նախարարք կէս սթափեալ իւրեանց մոլեգնութենէն, կրիութեան Ս. Գրիգորի ոտները կ'ընկնեն եւ իւրեանց գործած խստասրտութեան եւ առ ինքն ցոյց տուած անգթութեանց համար ներումն կը լինողեն : Վաղարշապատի դրան մօտ Ս. Գրիգոր չոգեց եւ ազօթեց որ Աստուած ներէ այլ եւս եւ վերացնէ արքունեաց եւ ժողովրդեան վերայէն այդ սաստիկ հարուածն : Յետոյ իւր խնդրանաց համեմատ առաջնորդուելով այն վայրն ուր Ս. Հովիփսիմեանք մարտիրոսացած էին ինն աւուրքք յառաջ՝ կը հրամայէ նոցա նշխարքն հաւաքել եւ առժամապէս նահառակաց մնացեալ պատառատուն զգեստներովն պատելով՝ այն հնձանի մէջ թաղեց ուր այդ սուրբ կուսանք իսկզբան իջեւանած էին :

Յ . Թուական Եղիցն ի Վիրապէն . — Ազատագեղոսի պատմութենէն երեւի որ Ս. Գրիգորի ելն ի Վիրապէն տեղի ունեցաւ ինն օր զկնի նահատակութեան Սրբոց Հովիփսիմեանց . արդ հանելով այն վեց օրն երբ Տրդատ «ի խոր տխրութեան եւ յանհնարին տրամութեան» իւր պալատին մէջ կը դեգերէր, կը մնայ միայն երեք օր այն մեծամեծ հարուածոց եւ փոփոխութեանց եւ Ս. Գրիգորի Վերապէն ելնելու համար ; մինչդեռ իմաստովրդխտոյ տեսիլքն (որ «հինգ կնեաց») առ նուազն հինգ օր կ'ենթադրէ Տրդատայ խելագա-

րուելէն յետոյ : Տարակոյս չկայ որ թիւերի շփոթութիւն կայ այստեղ , հաւանօրէն վկայաբանից քերթողական նկարագրութեանց համաձայնելու ճգամբ , պատմագիրք աշխատած են թիւերն յարմարելու : Մեր պատմիչք սովորաբար Ս. Գրիգորի՝ ի Վիրապէն ելնելու տարին կրդինն 301 : Սակայն նորագոյն հետազոտութիւնք շատ աւելի կանուխ թուական մի կրնշանակեն , որով Հայոց ընդհանրական դարձն՝ մեր մինչ ցարդ ընդունած թուականէն եւս աւելի կանուխ տեղի ունեցած կ'ենթադրուի : Այս թուականները քննութիւնն պէտք է առ այժմ յետաձգենք :

4. Պահի Առաջաւորաց . — Ս. Գրիգորի առաջին գործն էր՝ քարոզել քրիստոնէական ճշմարտութիւնն նորագործ թագաւորին եւ ժողովրդեան : Վերահաս հարուածն , Սոսրովելիստոյ տեսիլքն , Ս. Գրիգորի հրաշալի ազատուիլն Արտաշատու գրէն զկնի հնգետասանամեայ բանտարգելութեան , այս ամենը թագաւորի եւ հայ ժողովրդեան մտաց վերայ մի արտակարգ տպաւորութիւն գործած էր . նոքա կրհամարէին թէ «Ս. Գրիգորի Աստուածն» աւելի յաղթող եւ զօրաւոր հանդիսացած էր քան թէ իւրեանց հայրենեաց աստուածներն : Մէկ խօսքով սնոտի եւ ծուռ գաղափար ունէին Բարձրեալ Աստուծոյ վերայ , հեթանոսաբար կրկարծէին թէ նա Գրիգորի Աստուածն է , փոխանակ խոստովանելու որ նա տիեզերաց եւ ամենայն եղելոց Ստեղծողն ու Աստուածն է : Ուստի Ս. Գրիգոր ամենէն յառաջ սկսաւ ճշմարտութիւնը քարոզել , եւ թագաւոր ու ժողովուրդ նման նինուէացւոց հինգ օր անընդհատ անսուաղ ծոմապահութեամբ եւ աղօթիւք անցուցին , եւ միեւնոյն ժամանակ Ս. Գրիգորի քարոզութեանց անսացին , որ այդ հինգ աւուրց մէջ անդադար քարոզեց՝ Ս. Աւետարանի վարդապետութիւններ մի ըստ միովէ բացատրելով՝ եւ կրթելով զնոսա յաստուածգիտութեան , յորդորէր յապաշխարութիւն : Այս հնգօրեայ պահեցողութեան եւ ապաշխարութեան յիշատակն մինչեւ ցայսօր պահուած է մեր մէջ Առաջաւորաց Պահի անուամբ , որ Ս. Լուսաւորչի եւ Հայ. Եկեղեցւոյ առաջին սահմանադրութիւնն է :

5. Վարդապետութիւն Ս. Գրիգորի . — Այս նախապատրաստական պահեցողութենէ եւ կրթութենէ յետոյ , Ս. Գրիգոր ձեռնարկեց նորահաւատ արքունիքն եւ ժողովուրդն կանոնաւոր կերպով հրահանգել քրիստոնէական եկեղեցւոյ

հաւատոյ եւ վարդապետութեանց մէջ : Ազաթանգեղոսի աւանդեալ ընդարձակ վարդապետութիւնն այն դարու մէջ հեթանոսութենէ դարձող նորահաւատ երախայից սովորաբար տրուած կրօնական կրթութեան շատ կընմանի : Այսպիսի երախայից դպրոցներ երկրորդ եւ երրորդ դարու մէջ սովորաբար մեծ քաղաքաց մէջ կը գտնուէին , ինչպէս յԱլեքսանդրիա , ի Հռովմ , եւ անտարակոյս ի Կեսարիա ուր ինքն Ս. Գրիգոր կրթուած էր եւ ուսած էր ինչ որ յետոյ այնքան խնամքով աւանդեց իւր ազգի նորադարձ ժողովրդեան : Այն դարու քրիստոնէից սովորութեան համեմատ , մինչեւ երախայն կամ նորադարձ հաւատացեալն քրիստոնէական օրինաց եւ վարդապետութեանց մէջ լաւ չհրահանգուէր եւ զործով եւս ցոյց չտար իւր արժանաւորութիւնն , Ս. Մկրտութեամբ չէր ընդունուիլ ի լիազօր հաղորդութիւն Եկեղեցւոյ : Ուստի կը կարգաւք որ վաթսուն օր անդադար քարոզելով « ոչ դադարէր երբէք խօսել խրատել եւ ուսուցանել եւ հաստատել : » Ազաթանգեղոսի աւանդեալ վարդապետութիւնն համառօտութիւնն կամ ամփոփումն է նորա քարոզութեան զոր հաւանօրէն նոյն ինքն Ս. Գրիգոր պատրաստած է , ինչպէս երեւի պատմագրի այն ակնարկութենէն թէ « եւ ի նմին զմեկնութիւն նորուն հանդերձեալ գրեաց նորին (Հոգւոյն Սրբոյ) զօրութեամբն : » — Ազար. 424 :

Այն դարու հայ ժողովրդեան ոգեւորութիւն հանդէպ Ս. Գրիգորի ջանից եւ քարոզութեանց կարի յուզիչ էր . « Անթիւ մարդիկ հաւաքուած խոնուած՝ քարոզութիւնն լսելու խնձոյք կը կազմէին . անչափ ու անհամար բազմութիւն հաւաքուած էր տեսնելու եւ լսելու Աստուծոյ արտաքոյ կարգի հրաշալիքն : Երկրի բոլոր գաւառներէն մինչեւ իսկ կիներ ու մանուկներ հաւաքուած էին եւ երկիրղածութեամբ ունկնդիր լինէին , եւ Աստուծոյ խօսքերէն կարի սարսափած՝ կընազանդէին եւ կըհաւատային . Կենաց բանի քարոզութենէն կ'օգտուէին , եւ ամեն կերպով թագաւոր եւ իշխանք եւ ժողովուրդ զինքեանս պատրաստ կը ցուցանէին առնել ինչ որ Ս. Լուսաւորիչն հրամայէր : »

## Ք Ա Ր Ո Ջ

## ՅԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Ի ԳԵՐ. ՏԷՐ ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՄԱՐԿՈՍԵԱՆ

« Կոչեցես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց: (Մատ. Ա. 21: Դուկ. Ա. 31:)

Աստուծոյ իմաստութիւնը ամեն բան խորհրդով, կարգով եւ կատարեալ կընէ. այնպէս որ իւր գործոց մէջ տեսնուի իւր աստուածային կարողութիւնը, եւ որպէս զի մարդիկ կասկածի, երկմտութեան կամ անհաւատութեան պատճառ չունենան. բայց եթէ յաւակնոտ մարդիկ իրենց մեծամտութեամբ բաւական չը սեպելով Աստուծոյ յայտնութիւնը՝ ընդունայն հետաքննութեամբ իրենց ցանկացած փաստերն ու ապացոյցները փնտռեն յաւելորդս, եւ այն իրենց ցանկացածը չը գտնելով թերեհաւատին կամ մոլորին, պատճառն իրենք եղած լինին եւ ոչ թէ Աստուած:

Աստուծոյ հնազանդելու նպատակով եւ փափաքով ողջամիտ քննողը Աստուծոյ գործոց մէջ կըտեսնէ սա ճշմարտութիւնը թէ նա յայտնած է զինքը բաւական փաստերով: Այս ինչպէս որ ճշմարիտ է Աստուծոյ նիւթական գործոց, այսինքն տիեզերաց արարչագործութեան համար, նոյնպէս եւ ճշմարիտ է իւր հոգեւոր գործոց — փրկագործութեան — համար:

Աստուծոյ անսահման խորհրդոց մէջ պահուած Բանին Աստուծոյ մարդեղութիւնը եւ անոր այլ եւ այլ պարագայները՝ նահապետաց, արդարոց եւ մարգարէից ձեռքով կանխաւ յայտնած լինելով՝ իւր սահմանած ժամանակին կատարեց, մի եւ նոյն կանխաւ յայտնուած կերպովը: Բանն Աստուած մարմնացաւ ծնաւ հրաշալի կերպով ի կոյս մօրէ՝ գեր քան զբնութիւն. ինչպէս յայտնած էր Աստուած Եսայիայ թերնով եւ ինչպէս ակասանք ծննդեան օրը, եւ տակաւին կըտեսնենք: Բայց քանզի իւր անսահման իմաստութեամբ մեծամիտ հպարտներու ամբարտաւանութիւնը խորտակելու եւ մեծատանց սնապարծ ակնկալութիւնը ընդունայն հանելու համար՝ հաճեցաւ խոնարհ, աղքատ եւ աստուածային ծագման նշաններն ու վկայութիւնները տալ, որ մարդիկ չըսէին թէ. Չը գիտցանք,

կամ չը ճանչցանք . այլ բանական դատողութեամբ ճանչնային , ազատ կամօք եւ ընարութեամբ հաւատային ու սիրով հնազանդէին որպէս զի իրենց հպատակութիւնը յօժարութենէ լինէր եւ ոչ թէ բռնադատութենէ :

Այս նշանները , վկայութիւնները կամ ապացոյցները որքան որ պէտք էր՝ տուաւ մեզ , որ մտքով եւ ազատ կամքով իւր գալուստը գիտնանք , զինքը ճանչնանք եւ ընդունինք իբրեւ մեր միակ Փրկիչը : Մենք տեսնք ծննդեան օրը երկնային պատգամաբեր հրեշտակաց տուած աւետիսը դաշտի հովիւներուն . որք զալով ստուգեցին եւ իրենց խոնարհ երկրպագութիւնը մատուցին . ապա ամեն պատահած մարդկան կրպատմէին իրենց յայտնուած փառաւոր տեսիլը եւ մանկացեալ Աստուծոյ ծնունդը , խոստացեալ Փրկչին աշխարհ գալը : Այս մեծ ապացոյց էր նորա գալուն եւ աստուածային ծագմանը : Այսօր ալ ծննդեան ութերորդ օրը անուանակոչութեամբը կը յայտնուի իբրեւ Որդի Աստուծոյ եւ հնազանդ կամաց Հօր , եւ իբրեւ մարգացեալ Աստուած սահմանեալ Փրկիչ աշխարհի :

Աբրահամ նահապետին կատարեալ հաւատքին համար Աստուած սիրեց զինքը , եւ ուզեց ճշմարիտ աստուածպաշտութեան կրօնի աւանդապահն ընել զինքն ու իւր սերունդն , մինչեւ զար այն խոստացեալ օրհնեալ զաւակը , որով պիտի օրհնուէին այն ամեն ազգերը՝ որք Աբրահամու լուսամիտ խոնարհ ու հեղ հաւատքին ժառանգ կամ հետեւող լինէին : Քանզի ոչ թէ Աբրահամու մարմնաւոր սերունդին էր աւետեաց խոստումը եւ հոգեւոր օրհնութիւնը , այլ անոր հոգեւոր զաւակներուն ; անոր հաւատքին , հաւատարմութեան եւ հնազանդութեան հետեւողներուն : Ուստի երբ Աստուած կոչեց այս բարի մարդը հաւատացելոց հայր ընելու եւ իւր ամենակարողութիւնն ու բարութիւնը նորա վերայ եւ նորա ապագայ սերունդին վերայ ցոյց տալու , անոր հետ ուխտ մը դաշինք մը ըրաւ թէ — իւր սերունդը եթէ պահէ հաւատքը եւ չը խոտորի ճշմարիտ աստուածպաշտութենէ , Աստուած պիտի օրհնէ ու պաշտպանէ զայն : — Եւ որպէս զի աստուածապաշտ ժողովուրդը որոշուի հեթանոս կամ կոսապաշտ ժողովուրդէն , թլփատութիւնը նշան տուաւ , պատուիրելով՝ որ ինքն եւ իւր տան մէջ գտնուող բոլոր արունները թլփատուին , այնու հետեւ ամեն նորածին արու զաւակ ութերորդ օրը պէտք է թլփատուին (Ծննդոց. ԺԷ. 12.) Աբ-

բահամու սերունդ, Երբայեցի եղողը անշուշտ պիտի կատարէր այս օրէնքը . եթէ ոչ՝ իբր հեթանոս կրմերժուէր ժողովուրդէն :

Այս կրճատումը կը հշանակէր թէ, — Աստուծոյ ժողովուրդը հեթանոսական պղծութենէ, ամենակերպ մեղքէ կամ չար եւ անպտուղ ցանկութեան կիրքէ եւ գործքէ ազատ է . այս մարմնոյ յապաւումը նշան էր՝ որ ճշմարիտ աստուածապաշտ ժողովուրդը իւր սրտէն յապաւած, կը տրած, մէկդի ձգած է մեղքի յօժարութիւնները, եւ նուիրուած է սրբութեամբ զԱստուած պաշտելու եւ անոր հնազանդելու : — Ասով յայտնի կըլլայ թէ բոլոր մեղքերը կամ մեղքի յօժարութիւնները Աստուծմէ հեռանալուն, զԱստուած չը ճանչնալուն հետեւանքն ու մահաբեր պտուղն է . ուրեմն ճշմարիտ աստուածապաշտը պարտաւոր է սուրբ, արդար եւ անմեղ լինել, այս է ճշմարիտ կրօնին նշանը :

Մարդացեալ Բանն Աստուած, մեր բարերար Փրկիչը, թէ եւ կարօտ ու պարտաւոր չէր հնազանդելու այս օրէնքին, ոչ իբր նշանակ ուխտին եւ ոչ իբր նշան մեղքէ հրաժարած լինելու . բայց հարկ էր կատարել, նախ՝ հայրերուն եղած խոստման հաւատարիմ լինելը հաստատելու համար, եւ երկրորդ՝ ըստ մարմնոյ իբր Աբրահամու սերունդ եւ Երբայեցի . որպէս զի ապագային ընդունուէր ազգի եւ ժողովուրդին մէջ, եւ որպէս զի իբրեւ Իսրայելացի՝ իւր անունը արձանագրուէր տումարին մէջ իւր ազգատոհմին կարգը :

Հարկ էր նմա ասանկ կատարել բոլոր արդարութիւնը, որ հաւատարիմ լինէր Աստուծոյ խոստումը թէ . « Աբրահամին զաւակովը պիտի օրհնուին բոլոր ազգերը : Հարկ էր կատարել այն օրէնքը, որ իրմով, — Աստուծոյ խօսքով տրուած էր ժողովրդեան, — որպէս զի օրէնքին ճշմարտութիւնը հաստատէր եւ իբրեւ որդի՝ Աստուծոյ հնազանդ լինելը յայտնուէր եւ այս հնազանդութեամբ Աբրահամու սերունդ լինելը հաստատուէր . քանզի Աբրահամու եւ անոր սերունդին խոստացուած էր աւետիքը, աւետեաց զաւակը, ազգերու օրհնութեան օրհնեալ Չաւակը, որ ահա եկաւ զմեզ օրհնելու ամեն հոգեւոր եւ մարմնաւոր օրհնութեամբ » իսկ մեք կը վայելեմք այս օրհնութիւնները՝ որչափ Աբրահամու հաւատքն ու հնազանդութիւնը ունենանք, որչափ որ սրտով թրխատուած լինինք մեղքի յօժարութիւնները մեր սրտէն կտրելով :

Արդ մեր Փրկիչը կատարելով այսօր մէկ խափանելի օրէնք

մը եւ հնազանդելով աստուածային կամաց՝ կը սովորեցնէ մեզ իւր ազգու օրինակաւ հնազանդիլ ամեն ընական եւ բարոյական օրինաց , որք աստուածադիր են . նոյնպէս հնազանդիլ մարդկային քաղաքական բարի օրինաց , որք համաձայն լինին աստուածային օրինաց եւ ոչ հակառակ . սովորեցուց նաեւ որ խաղաղութեան եւ հասարակաց հոգեւոր փրկութեան համար հարկ է ամեն զոհողութիւն յանձն առնուլ մինչեւ իսկ արիւն թափել՝ եթէ հարկ լինի : Ահա այսպէս մեր Փրկիչը հնազանդելով Հօր կամաց՝ յայտնեց իւր հարազատ սրբիութիւնը . այսպէս մենք ալ պէտք է մեր կատարեալ հնազանդութեամբ երկնաւոր Հօր կամաց եւ մեր Փրկչի պատուէրներուն՝ յայտնենք մեր հաւատարիմ որդեղրութիւն Յիսուս Քրիստոսի ձեռքով . եւ մեր ճշմարիտ եղբայրութիւնը մեր բարերար ու մարդասէր Փրկչին :

Սակայն Քրիստոսի Փրկչին մերոյ ծննդեան ութերորդ օրը իբր անօրինական օր , իբր անուանակոչութեան տօնի օր աւելի մեծ նշանակութիւն ունի եւ խորհրդածութեան արժանի է :

Երբայցեւոց մէջ սովորութիւն էր , որ մանկան ծննդեան ութերորդ օրը անուանալ կը նշանակէին , եւ ընդհանրապէս Երբայցեցիք կը նկատէին որ մանկան անունը իր վիճակին համաձայն նշանակութիւն ունենայ , երբեմն կանոնին անունը կամ մերձաւոր դէպքէ մը կամ անոր ապագայ պաշտօնէն , երբեմն ալ կը լինէր մարգարէութեամբ : Այսօր ըստ սոյն սովորութեան այս նորածին մանուկ թագաւորին անուն պիտի դնեն , ուրեմն այսօր տիրոջ անուանակոչութեան տօնն է :

Բայց ի՞նչ պատշաճ անուն դնելու են այս հրաշալի մանկան , մերձաւոր ի՞նչ նշանաւոր պէտք կայ : Մանուկը ի՞նչ պաշտօն ունի , անոր վրայ ի՞նչ մարգարէութիւն կայ : Մերձաւոր դէպքն է մարդկան ազգի փրկութեան կարօտութիւնը եւ Փրկչի մը ակնկալութիւնը . Մանկան պաշտօնն է ժողովուրդներու փրկութիւնը իրենց մեղքերէն , անոր վրայ եղած շատ մարգարէութիւններէն մէկն ալ այս է թէ . « Տէրը ինքնին պիտի գայ եւ զմեզ փրկի » : Սակայն մեր Տիրոջ անունը նշանակելու համար այս յոգնութիւններուն պէտք չունինք . անիկա արդէն յայտնուած է . ինչպէս գիտէք նոյն իսկ աւետարեւր հրեշտակը բերաւ նորա անունը երկնքէն եւ պատուիրեց սուրբ կուսին եւ արգար Յովսեփայ թէ . « Անոր անունը Յիսուս դնես . ինչու որ անիկա իր ժողովուր-

դը պիտի փրկի իրենց մեղքերէն» :

Այսօր ծննդեան ութերորդ օրը՝ « եկան թլփատել Մանուկը եւ անունը դրին Յիսուս , որ անուանուած էր հրեշտակէն » : Խորհրդաւոր է այս անունը , քանզի նորա մէջ կը բովանդակի Տեառն մերոյ թէ բնութիւնը եւ թէ պաշտօնը : Յիսուս կը նշանակէ Փրկիչ . ուրեմն պիտի փրկէ նա մարդկան ազգը : — Ի՞նչ բանէ պիտի փրկէ : — Ոչ թէ մարմնոյ արտաքին թշնամիներէ , խնչպէս կըսպասէին եւ տակաւին կըսպասեն նիւթամոխներն ու աշխարհասէրները . — այլ « նա պիտի փրկէ իր ժողովուրդը , իրենց մեղքերէն » , իրենց հոգեւոր թշնամիէն , յաւիտեան գերող եւ թշուառացնող անաւոր թշնամիէն : Սակայն այս պաշտօնը լոկ մարդու պաշտօն չէ , Աստուած միայն կրնայ փրկել մարդկութիւնը իրեն մեղքէն եւ ազատել հոգին յաւիտեանական դատապարտութենէն . ուրեմն Յիսուս՝ լոկ փրկիչ ըսել չէ , այլ Տէր փրկիչ , կամ փրկութիւն Տեառն . այո՛ , այսպէս պիտի նշանակէ որ Աւետարանիչը բացատրելով կ'ըսէ թէ . « կատարուեցաւ Եսայիայ մարգարէութիւնը , Ահա կոյսը պիտի յղանայ , որդի պիտի ծնանի եւ անոր անունը « Էմանուէլ » պիտի կոչեն , որ — Աստուած մեզի հետ ըսել է » : Ուրեմն Յիսուս անունով կիմացուի Աստուած մեզի հետ է , որ զմեզ փրկէ . « Տէրը ինքնին պիտի ազատէ » : Ապա ուրեմն Յիսուս է Աստուած :

« Իր ժողովուրդը » , կը նշանակէ իրեն հաւատացող , հետեւող եւ հնազանդող ամեն մարդ , առանց խորութեան ազգի , վիճակի եւ աստիճանի : Խոստումը Աբրահամին եղած էր . Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն էր Աբրահամի սերունդը : Բայց Աստուած ընտրեց այդ ժողովուրդը Աբրահամու հաւատքին եւ հնազանդութեանը համար . պայմանաւ որ իրեն ազգը սերունդը ունենայ իրեն հաւատն ու հնազանդութիւնը . ապա միայն անոնք են նորա ժողովուրդը՝ որ ունին Աբրահամու հոգեւոր թաքնամասնութիւնները . ամեն ազգէ ամեն անհատ մարդ որ ժառանգած է Աբրահամու հաւատքը , է Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը , նա է արժանի Յիսուսի փրկութեանը , քանզի անանկները կըսեպուն զաւակ կամ սերունդ :

Աստուծոյ խոստման համեմատ Փրկիչը եկաւ Աբրահամու Իսահակ որդւոյն սերունդէն , Իսրայէլի ազգէն , Դաւթի ցեղէն , որոց տրուած էր խոստումը , աւետիսը եւ որդեգրութիւնը . անոնց մէջ Աբրահամու հոգեւոր զաւակ՝

անոր հաւատքին ժառանգ գոնուողները գիմնեցին Փրկչին եւ փրկուեցան: Բայց այս չափով չէր լրանար Փրկչի պաշտօնը. քանզի ամեն ազգաց եւ ժողովրդոց մէջ ալ կային եւ միշտ կը գտնուէին Արքանամու հոգեւոր սերունդ, անոր հաւատքին ու հնազանդութեան հետեւող զաւակներ, աւոնք ալ կարօտ են փրկութեան եւ սիրով կը ձգուին դէպ ի Փրկիչը ինչպէս վտանգի երկիւղէն փախչող մանուկը կը դիմէ իր սիրելի ծնողաց գիրկը: Փրկիչը զանոնք ալ կը փրկէ, ուրեմն Յիսուս էր փրկող բոլոր աշխարհի, բոլոր մարդկութեան, միայն թէ նոքա զգալով իրենց փրկութեան կարօտ վիճակը՝ գիմնն անոր:

Ասանկ մեծ, հոգեւոր եւ ամենածանր գործ մարդու սահմանաւոր կարողութենէն անսահման կերպով վեր լինելով սոսկ մարդը չէր կարող մարդկութեան փրկիչը լինել, այլ այս ամենաբարի, ամենիմաստ եւ ամենակարող Աստուծոյ յատուկ է: Ապա նորէն կը զրկենք թէ Յիսուս էր Աստուած: Փանդի Բանն Աստուած միանալով մարդկային բնութեան հետ ճշմարտապէս եղաւ «Աստուած մեզի հետ». եւ քանզի խօսեցաւ անանկ խօսքեր, որ «երբէք մարդ անանկ չը խօսեցաւ». եւ գործեց անանկ գործեր, որ «ոչ մէկը գործած է». անոր խօսքերն ու գործքերը աստուածային Աստուծոյ միայն յատուկ են. ուրեմն նա է Աստուած:

Ահա այսպէս մեր Տէրը այսօր հնազանդելով օրինաց, կը սովորեցնէ մեզ հնազանդութիւն, յայտնելով զինքն փրկող Աստուած՝ կը զօրացնէ մեր փրկութեան յոյսը, քանզի ամենակարող եւ ամենահնար իմաստուն է, «ամեն գիտութեան եւ իմաստութեան գանձերը անոր մէջ բովանդակուած են». եւ այսչափ մեծ անսահման սիրով խոնարհած մեզ նմանելով՝ մեզի հետ լինելուն համար՝ զմեզ ալ կը պարտաւորէ որ զինքը սիրենք բոլոր սրտով. եւ բոլորանուէր ընծայուինք իրեն, որ նա լինի մեր փրկիչը. վատահոլութեամբ ապաւինինք իրեն առանց երկմտութեան, հաստատ գիտնալով որ եթէ այս քան սիրով խոնարհեցաւ մեր փրկութեան համար, նոյնքան սիրով եւ հաճութեամբ ընդունելով կը սրբէ կը փրկէ, կը կենդանացնէ զմեզ եւ յաւիտենական կենաց անպատոււմ երջանկութիւնը կը պարգևէ մեզ ամենեցուն, զինքը սիրող իրեն հաւատացող եւ հնազանդող ամեն մարդու, քանզի նա է ամենակարող, ամենաբաւական՝ միմիայն Փրկիչ մեր եւ Տէր, եւ իրեն կը վայելէ հնազանդութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆՆ

Մի քանի ամսով յառաջ Կ. Պոլսոյ ազգային թերթերը ծանուցին թէ Գեր. Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Նոր Զուղայու Առաջնորդութենէն հրաժարած էր, եւ մեր Սրբ. Հայրապետի հրամանաւ Դաւրէթի նախկին Առաջնորդ Գեր. Տ. Սահակ Եպիսկոպոս Պարսկաստանի եւ Հնդկաստանի ընդարձակ թէմի Հովիւ նշանակուած էր: Բայց յետոյ անսուեցաւ որ թէպէտ Մաղաքիա Եպիսկոպոսի հրաժարիլն ստոյգ էր, Սահակ Եպիսկոպոսի Զուղա գնալու լուրն կանխահաս էր, վասն զի վերջը գրուեցաւ թէ Նոր Զուղայեցիք իւրեանց ընտրելու իրաւունքը գործ ամելով խնդրեց են Սրբազան Հայրապետէն որ Զուղայու նախկին Առաջնորդ՝ Գեր. Տ. Գրիգորիս Եպիսկոպոս վերահաստատուի իւրեանց վիճակին վերայ. նոյն մտօք գրութիւն մի եւս Գրիգորիս Սրբազանին ուղղած են՝ թախանձելով որ ընդունի վերադառնալ:

Թէ այս վերջին լուր ինչ ստուգութիւն ունի, պէտք է սպասել Ս. Էջմիածնի պաշտօնական ծանուցման: Սակայն եթէ Նոր Զուղայեցիք ի վերջոյ արթնցած են իւրեանց պարտուց եւ իրաւանց մասին, եւ հասկացած են որ Հայ. Եկեղեցին կրպանանջէ որ ամեն ժողովուրդ իւր Հովիւն ընտրէ, այս ուրախալի լուր է: Նոր Զուղայու թէմն կ'ամփոփէ ամբողջ Պարսկաստան եւ Հնդկաստան եւ կրպարունակէ իբր տաններկու պարսկական եւ հնդկական՝ ըստ մեծի մասին կարեւոր քաղաքաց, եւ հարիւրէն աւելի բոլորովին հայաբնակ գիւղօրէից հոգեւոր հովուութիւնն: Նոր Զուղա արդէն Սպահան քաղաքի մէկ մասն է. Թէհրան մայրաքաղաքն է, Ռաշտ՝ Կասպից ծովու եզերքի վերայ կարեւոր անցուղարձի կեդրոն մի է ի մէջ Ռուսաստանի եւ Պարսկաստանի, Շիրազ եւ Բուշեռ, Ղազվին եւ Համադան, առաւել կամ նուազ կարեւոր քաղաքներ են Պարսկաստանի մէջ: Կալկաթա Հնդկաց մայրաքաղաքն է. Բոււմբայի, Մադրաս, Ռանգուն, Բատաւիա, Սինգապուր եւ այլն ըստ մեծի մասին կարեւոր քաղաքներ են Հնդկաստանի եւ Մալայեան կղզեաց մէջ, որոց հայ գաղթականք իւրեանց տասնի չափ եկեղեցիներով եւ գրեթէ նոյնաթիւ քահանայներով՝ յոյժ կարօտ են արթուն եւ կարող հովուի: Պարսկաստանի Չարմահալ, Փէրիս, Գազալ եւ Գամարա գաւառներն գրեթէ ամբողջովին հայաբնակ գիւղերէ

բաղկացեալ են, որոց անուններն ու հին (1852ի) մարդահա-  
մարն կարելի է տեսնել Յովհաննանցի Զուղայու պատ-  
մութեան մէջ: Վերիվերոյ հաշուելով, նոր Զուղայու Ա-  
ռաջնորդն իշխանութիւն ունի իբր 150 եկեղեցեաց վե-  
րայ, որոց քահանայից թիւը կարենք գնել մօտ 200 ի:

Այսքան ընդարձակ եւ կարեւոր թէմի Առաջնորդն յայտնի  
է որ մարմնաւոր անողջութեան եւ աշխուժութեան հետ  
մէկ տեղ հարկ է որ մտային եւ շեղուի կարողութիւնն  
ունենայ, որպէս զի իւր ամեն դասակարգէ բաղկացեալ հօտի  
պէտքերը գոհացնելէն դուրս, կարենայ նաեւ իւր շրջակայ  
այլազգի ժողովրդոց հետ եւս բարեկամական յարաբերու-  
թիւն հաստատել եւ պահել:

Սխալ կարծիք մի է թէ Հայ Առաջնորդ մի՛ միմիայն  
իւր հօտը կառավարելու պաշտօն ունի, առանց իւր օտա-  
րազգի դրացեաց հետ որ եւ իցէ անչլութիւն կամ բարե-  
կամական յարաբերութիւն պահելու: Հայ հովիւը իւր  
մասնաւոր պարտականութիւնը կատարելէն յետոյ՝ պար-  
տի իւր հոգեւոր գործունէութիւնը տարածել իւր շըր-  
ջակայ օտարազգի եւ օտարադասն ժողովրդոց մէջ ա-  
մեն պատուաւոր եւ օրինաւոր միջոցներով: Եթէ իբրաւ է  
որ մասնաւորապէս քրիստոնեայ կղերն այնպէս մէջ «աղ»  
եւ «լոյս» եւ «խմոր» լինելու սահմանեալ է, ուրեմն նորա  
պաշտօնի բնաւորութիւնը կը պահանջէ որ իւր համեմիչ եւ  
լուսատու եւ իմորիչ աղբեցութիւնը ներգործէ իւր շուրջը  
գտնուող ամեն տարեբաց վերայ: Ո՞չ ապաքէն իւր հօտն  
արդէն անօրեայ չփման մէջ է դրացի օտարաց հետ, եւ կը  
փափազի տեսնել իւր հովիւն եւս նոյն բարձր դրքի մէջ  
յորում օտարաց հովիւներ կը գտնուին:

Պարսիկք, մասնաւորապէս Սպահանցի իսլամք, վերին  
աստիճան հարցասէր եւ բաւականին բանիմաց մարդիկ են,  
որ ուսեալ հայ հոգեւորականը շատ կը յարգեն եւ նոցա  
հետ ժամերով եւ օրերով կրօնի վերայ խօսակցիլ կը սիրեն:  
Նոյն իսկ եթէ կրօնական տեսակէտով արդիւնաւոր չլինի  
այս տեսակ գիտնական բարեկամութիւն իսլամ մօլլաների  
հետ, շատ անգամ այսպիսի առիթներով հաստատուած բա-  
րեկամութիւնը մեծապէս օգտակար կը լինի յազգային եւ ի  
քաղաքական դէպս, երբ Պարսից վարչական յատուկ դրու-  
թիւն կը պահանջէ բարձրաստիճան իսլամի բարեկամութիւնն,  
որ բազում անգամ շատ աւելի զօրութիւն եւ ազդեցութիւն  
ունի այն երկրին մէջ քան թէ մի հիւպատոսի կամ դեսպանի

միջամտութիւն եւ պաշտպանութիւն :

Նոյնպէս Հնդկաստանի մէջ այլ եւ այլ եւրոպացի եւ հնդիկ ցեղերու հետ ծանօթանալն , նոյն լիզուն փոքր ի շատէ գիտենալն , շատ կարեւոր է նոյն իսկ այն հայ գաղթականութեանց համար զորս հովուելու կոչուած են :

Պարսկա — Հնդկական այս ընդարձակ եւ ջրուած թէմի ժողովուրդն շատ քիչ անգամ իւրեանց ընտրութեան իրաւունքն ի գործ դրած են . նախ՝ քանզի ընդհանուր ժողովրդական ընտրութիւն մի , որոյ մէջ ամբողջ Պարսկաստանն եւ Հնդկաստանը կարենայ ձայն ունենալ , գրեթէ անկարելի է : Երկրորդ՝ տեղի հեռաւորութեան պատճառաւ Պարսկահայք եւ Հնդկահայք բոլորովին անծանօթ են Տաճկաստանի կամ Ռուսաստանի եպիսկոպոսաց , եւ հետեւաբար չեն կարող մի որեւէ արժանաւոր եպիսկոպոսի անուն առաջարկել Սրբ. Կաթողիկոսին : Այս պատճառաւ երբ Առաջնորդի պէտք ունենան Ջուղայեցիք , նոքա ընդհանրապէս Ն. Ս. Օծութեան կրդիմեն եւ կրխնդրեն որ արժանաւոր մէկն առաքէ : Այս դրութիւն այն օգտակարութիւնն ունէր կամ կրկարծուէր ունենալ , որ Ռուսահպատակ եպիսկոպոս մի՛ հզօր պետութեան հովանաւորութեամբ աւելի օգտակար կարէր լինել քան թէ տեղացի ոմն : Բայց քաղաքական ներկայ աշխարհը ճանաչողը գիտէ որ այդ պարագայն ըստ ինքեան այլ եւս շատ քիչ նշանակութիւն ունի , եւ կարէ միայն առ առաւելն մէկ անհատ հպատակի վերաբերել : Միւս կողմէ Սրբ. Կաթողիկոսէն զրկուած եպիսկոպոսն եւ նորա գործունէութիւնն միշտ բարձր հովանաւորութեան ներքոյ է՝ մասամբ Ռուսաց կառավարութեան՝ չնորհիւ Հայրապետի միջամտութեան , եւ մասամբ Պարսից կառավարութեան՝ չնորհիւ այն բարեկամական յարաբերութեանց զորս Հայոց Կաթողիկոսունք միշտ պահած են Պարսիկ կառավարութեան հետ , ինչպէս որ մեր ներկայ Հայրապետն եւս այնքան ինամքով կրպակէ Արեգակն . Մօզաֆֆէրէզին Շահի հետ ունեցած բարեկամութիւնն :

Ինչպէս Ջուղայեցեաց համար դժուար է Տաճկահայ եւ Ռուսահայ եկեղեցականներէն իւրեանց յարմար առաջնորդ մի ընտրել , գրեթէ նոյնքան դժուար է մեր Սրբազնագոյն Կաթողիկոսի համար իւր տրամադրութեան ներքոյ գրտնուած եկեղեցականներէն մին զրկել ի Ջուղա , որ այդ ընդարձակածաւալ թէմի յատուկ պահանջներին յարմարի : Միւս կողմանէ շատ անհաւանական կրթուի որ Գրիգորիս

Սրբազան իւր ներկայ ծերութեան միջոցին յանձն առնու-  
կատարել այն տաժանելի ճանապարհորդութիւններն , որ  
Ջուղայու ամեն բարեխիղճ Առաջնորդի անհրաժեշտ պարտքն  
է : Երեսուն եւ հինգ կամ քառասուն տարիներէ ի վեր  
Պարսկահայոց վերոյիշեալ գիւղորէից քնակիչք հայ եպիս-  
կոպոսի երես տեսած չեն : Եթէ երիտասարդ եպիսկոպոսաց  
համար այս հովուական այցելութիւնք դժուար են, մի ծե-  
րունի Առաջնորդի համար ֆիզիքապէս գրեթէ անհնարին են :

Ջուղայեցիք եւս կարծես Աւետարանական առածն գոր-  
ծադրելու համար թէ՛ «Մարգարէ յիւրում գաւառի պատիւ  
ոչ ունի», — հոգ չեն տանիր իւրեանց մէջը խնդրել եւ  
գտնել արժանաւոր հովիւ մի, որ իւրեանց լեզուն ու իւ-  
րեանց ցաւերն հասկանայ, թեմի այլ եւ այլ կողմերն եւ  
ժողովրդները երկարամեայ կենակցութեամբ ուսումնասիրած  
լինի, եւ իւրեանց մէջէն հեռու հայրենիք չունենայ որ իւր  
վիճակն օտարութիւն նկատելով ուշ ու միտքն ուղղէ՝ ա-  
պագային հայրենիք վերադառնալ եւ իւր աշխատութեան  
արդիւնքն հայրենեաց մէջ խաղաղութեամբ վայելել , ինչ-  
պէս արդէն Ջուղայու երեք նախկին առաջնորդներ կը-  
վայելեն :

Այս վայրկենիս Ջուղայու մէջ մի քանի այրիացեալ քա-  
հանայք կան, որք եթէ Տաճկաստանի կամ Ռուսաստանի  
մէջ գտնուած լինէին՝ ի վաղուց հետէ եպիսկոպոսութեան  
եւ առաջնորդութեան բարձրացած կը լինէին : Օրինակի  
համար, Ջուղայու ընդհանուր Աւագերէց՝ Արժանաշնորհ  
Տէր Մարտիրոս Հայրն պիտի յիշէինք իբրեւ ամենէն ար-  
ժանաւորն, որ իւր գերազանց յատկութիւններովն համայն  
Պարսկաստանի եւ Հնդկաստանի հայոց սէրն ու համակրանքը  
կըվայելէ : Բայց դժբաղտաբար Ջուղայեցւոց համար՝ այդ  
պատուական քահանայն այժմ ի խոր ծերութեան կըգտնու-  
ուի . ոչ ինքն կըցանկայ այդպիսի մի ծանր լուծ իւր վերայ  
առնուլ, ոչ եւս ցանկալի է նորա գրեթէ իննսնամեայ ծե-  
րութեան հանգիստը խանգարել՝ Առաջնորդութեան ծանր  
բեռն նորա վերայ դնելով : — Սակայն մի ուրիշ այրի-  
ացեալ քահանայ կայ, որոյ մասին չկարծեմք թէ ամբողջ  
Պարսկաստանի եւ Հնդկաստանի մէջ երկու անձինք գտնուին  
որ տարբեր կարծիք ունենան : Արժ . Տէր Սեղբեստրոս  
Յովհաննէսեանն ասել կուզեմ : Ամենքն կըսիրեն ու կը-  
յարգեն զնա : Նորա վեհանձնութիւն եւ քաղաքավար վար-  
մունք զինքն պատկառելի կացուցած են որպէս առաջի հա-

յոց նոյնպէս եւ յաչս օտարաց : Նորա քարոզչական ձիրքն, նորա աստուածաբանական խորին հմտութիւն, (\*) եւ առաւել քան զամենայն նորա անստգիւտ կեանքն, որով 30 տարիներէ ի վեր իւր կենակցէն զրկուելով՝ քրիստոնէական համբերատար առաքինութեամբ Ս. Գրոց մէջ փնտռած եւ գտած է իւր մխիթարութիւն : Քանիցս պաշտօնով Հընդկաստան եւ (կարծեմք) Պարսկահայոց գիւղերը ճանապարհորդած է. եւ ամենի վերայ Տէր Սեղբեստրոս Հայր խոր տպաւորութիւն թողած է եւ իբրեւ ճշմարիտ Այր Աստուծոյ ճանչցուած եւ վարուած է :

Թէ ընդէ՛ր մի այսպիսի արժանաւոր անձն մինչեւ ցայսօր եպիսկոպոսութեան բարձրացած չէ՝ մասամբ վերոյիշեալ սնուտի քաղաքական պատճառաբանութեան վերադրելու է, եւ մասամբ եւս այն սխալ կարծեաց թէ մի եւ պիսկոպոս պէտք է անպատճառ վանական եղած լինի : Այս թիւրիմացութեան մասին ուրիշ անգամ պիտի խօսուի : Այժմ կըբաւէ մեր սիրելի հայրենակիցներին վստահացնել որ եթէ իւրեանց մէջ այդքան սիրելի եւ քաջ ծանօթ Տէր Սեղբեստրոսն հարկ եղած յանձնարարական գրութեամբ առ Սրբ. Կաթողիկոսն յուզարկին եւ խնդրեն որ զայն իւրեանց վիճակի եպիսկոպոս ձեռնադրէ, Ն. Ս. Օծուութիւն երբէք չի մերժեր նոցա խնդիր :

Հայ. Եկեղեցին երկու տեսակ եպիսկոպոսութիւն կըճանայ. մին՝ իբրեւ մեծ վանաց տեսուչ կամ Առաջնորդ, եւ միւսն՝ իբրեւ մի վիճակի կամ քաղաքի եպիսկոպոս կամ Հովիւ : Վանքի Առաջնորդը կ'ընտրուի վանական արեւղայներէն եւ վարդապետներէն, իսկ քաղաքի կամ վիճակի եպիսկոպոսն՝ նոյն վիճակի քահանայներէն : Այս որոշումն ամենապարզ կերպիւ կարելի է տեսնել Աւագ Մաշտոցի (Եպիսկոպոսական ձեռնադրութեան մատենին) մէջ : Երբ Հայրապետը կըճրամայէ կարգալ «թուղթս վկայութեան յիւրմէ վիճակէն», Աւագ Մաշտոցն վկայութեան թղթոյ երկու օրինակ կըտայ. մին վանական եպիսկոպոսոցուի համար որ պէտք է լինի արեւոյայ կամ վարդապետ, եւ պիտի կոչուի «ի պաշտօնատարութիւն սրբոյ Աթոռոյս եւ յօգնու-

(\*) Տէր Սեղբեստրոս Հայր հեղինակն է Տեսական Աստուածաբանութիւն անուամբ ընտիր եւ հմտալից երկին որ մի քանի տարւով յառաջ ի նոր Ջուղա հրատարակուեցաւ. նոյնպէս մի քանի ուրիշ մանր գործեր, ինչպէս Քրիստոնեականութիւն Հաւատոյ և այլն հրատարակած է, և ինչպէս կըլսեմք իւր ամենէն կարեւոր հեղինակութիւնք տպագրուած չեն տակաւին :

Թիւն եղբայրութեան խնդրողացս : » Իսկ միւսն՝ վիճակաւոր եպիսկոպոսոցուի համար է, որ պէտք է լինի « քանակայ ի մերմէս Եկեղեցւոյս, » այսինքն, նոյն վիճակի քահանայներէն ընտրեալ : Մեր նպատակէն դուրս է ներկայիւս բացատրել այն տխուր պատճառներ որք հետզհետէ քահանայից վիճակն ստորնացուցին եւ լուսարարի ու ժամէ կոչի պաշտօնին հաւասարեցին, որով հարկ եղաւ վաճառքէն ընտրել արժանաւոր Հովիւներ, եւ մեր Աւագ Մաշտոցի այս կարեւոր որոշումն անտես առնելով՝ ստիպուեցան Վիճակաւոր Հովուի պաշտօնը վանական Առաջնորդի պաշտօնի հետ միացնել :

Մեր ներկայ նպատակն էր միայն մեր պատուական Հնգկահայ եւ Պարսկահայ հայրենակցաց վստահացնել որ եթէ իւրեանց այրիացեալ քահանայներէն արժանաւորագոյնն ընտրեն իբրեւ իւրեանց եպիսկոպոս՝ թէ Հայ. Եկեղեցւոյ հիմնական եւ նախնական օրինաց համաձայն վարուած կըլինին եւ թէ ներկայ սովորութեան, որ ի դէպս մահուան կնոջ, քահանայն կարէ վանական նկատուիլ :

Մեր ընթերցողաց հետաքրքրութեան համար կըզնեմք աստ վերոյիշեալ վկայութեան թուղթերէն մին, այսինքն այն որ վիճակի եպիսկոպոսի ձեռնադրութեան կըպատկանի : Թերեւս մեր Զուղայեցի հայրենակիցք յօժարին իւրեանց առ Սրբ. Հայրապետն ուղղելիք խնդրագիրն եւս ըստ այնմ յօրինել՝ աւելցնելով ընտելոյն անուան ի յարմար տեղուջ :

Այս է թուղթն . —

« Ծնորհազարդ սուրբ Հայրապետ, որ կաս յիշխանութեան Առաքելական Աթոռոյդ Թաղէոսի եւ Բարթուղիմէոսի Առաքելոցն, եւ երջանիկ Հօրն մերոյ սրբոյ Գրիգորի Լուսաւորչին, երկրպագեմք քեզ ամենայն պաշտօնեայքս (այս անուն վանից - եւ կամ վիճակի) Քահանայք եւ համօրէն ուխտ եկեղեցւոյ եւ իշխանք եւ ժողովուրդք : Մի՛ լիցի ծածկեալ ի քուսմէ մեծութենէդ վասն մերոյ Եկեղեցւոյն՝ զի առանց հովուի էլ բայց զքեզ ունելով՝ ոչ ինչ վշտանամք : Արդ՝ զի միջպափշտակիցի ի թշնամւոյն ժողովուրդս Աստուծոյ, աղաչեմք զքեզ օգնական լինել մեզ վասն չարին՝ որ փութալ գայթակղեցանել զմարդիկ . եւ զոր ընտրեաց ժողովս մեր խմբնեցուն (զայս անուն Քահանայ) ի մերմէ Եկեղեցւոյս՝ կարգել մեզ Եպիսկոպոս : Քանզի այր է պատուական, բարի եւ իմաստուն եւ վարժեալ հանձա-

րով, մաքուր եւ զգաստ եւ հեզ ըստ կամացն Աստուծոյ եւ մեր ամենեցուն. վասն որոյ եւ առաքեցաք զդա առաջի մեծանձնութեան քում, եւ միաբանութեամբ սրտիւ խընդրեմք ամենեքեան՝ կարգել զսա քո սուրբ ձեռնադրութեամբք եւ պատկերաւդ Եպիսկոպոս մերոյս վիճակի. եւ Տէր՝ որ արարողն է եւ է ընդ մեզ որպէս զհայր բարեգութ, կարող է զօրացուցանել զդա, եւ ընդ իւրով նախախնամութեամբն ի ձեռն դորին պահել զմեզ: Այլ եւ զի դիտասցես Տէրդ մեր, զի ամենեցուն մեր ժողովս միաձայն խնդրեն զդա առաջնորդ:» — Առագ Մաշտոց հջ 13

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆՍՄԱԿ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ

Հայրաշնորհ Տէր Թէոդորոս Գահանայ.

Սիրելի՛ Տէր Հայր,

Թէպէտ չա՛տ ուչ, սակայն սրտազինս կուգամ շնորհաւորելու Ձեր «Եկեղեցի» Կրօնաթերթը: Կրկարգամ զայն ուշադրութեամբ ու համակիր իմ գործոյդ առաւել յառաջացմանը: Ձեր Ամսաթերթը — պէ՛տք է խոստովանել — Հայ Մամլոյն զգալի մէկ պակասը կըլեցնէ: Մենք, Հայերս, դեռ չա՛տ պէտք ունինք մեր ճշմարիտ Կրօնքն ուսումնասիրելու, Կրօնք՝ որ Բարւոյն, Ճշմարտին ու Գեղեցկին Կրօնքն է:

Իմ յապաղմանս մէջ, կարծես, տեսակ մը նախասպաշարում ունեցայ, — երբ Կ. Պոլսոյ մէջ կըհրատարակէիք զայն ու ես Խարբերդի Առաջնորդ էի. չեմ մոռցած թէ՛ առաջի՛նն ես եղայ զՁեզ շնորհաւորող եւ կարծեմ, այն ատեն, վերջինն ալ ես մնացի. իսկ, այս անգամ, չեմ գիտեր ինչու՞ յապաղեցայ ու դարձեալ վերջինը մնացի՝ առանց սակայն առաջինն ալ ըլլալու... բայց, շրջահայեցութեամբ մը, կըզգամ հիմայ որ՝ այս յապաղումս, թէպէտ աննշան Ձեզի համար՝ ըստ որում պէտք չունիք իմ գրուածութեանրուս, գէթ ինձ համար նշանակելի եղաւ, զի լաւագոյնս ուսումնասիրեցի մարդկային՝ չ՛ըսեմ մեր ազգաստիճացալիններու գաղափարները՝ հանդէպ Ճշմարտութեան:

Կարդացի ի՛նչ որ գրուեցաւ ցարդ, թեր ու դէմ, Ձեր

աշխատասիրութեան նկատմամբ, անոնք՝ որ թեր հանդիսացան Ձեր օգտակար հրատարակութեան, զգալով անշուշտ գործոյդ նպաստաւոր հանգամանքը, բնականաբար պիտի աջակցին Ձեզ՝ թէպէտ ցայս վայր աջակիցներ ալ չ'ունեցաք, գո'նէ ա'յնքան՝ որչափ եւ որոնցմէ ես կը սպասէի. իսկ անոնք՝ որ դեռ ելան Ձեր կրօնական հրատարակութեան, ամէնէն ազատաւիտները թերեւս, զարմացուցին զիս թէ՛ ի'նչպէս քրիստոնէական Կրօնի վարդապետութիւնը կ'որոշեն ճշմարիտ Ազատաւետարեան՝ կարծելով թէ՛ առանց այդ վարդապետութեան, կարող էր մէկը ունենալ ամենեցուն մեզ պաշտելի այդ Ազատաւետարիւնը:

Կարգալով ծայրէ ի ծայր Աւետարանը՝ չեմ գիտեր, Ազատաւետարեան ո՞ր նշանախեցէն հեռացած պիտի ըլլային, քրիստոնէական կրօնի ո՞ր պատգամին մէջ չի պիտի կըրնային գտնել Բարին, Փեղեցիկն ու Կատարեալը... ու Դուք, Սիրելի Տէր Հայր, Աւետարանի այդ Ազատաւետարեանն է որ կը քարոզէք, Կրօնի Ազատութեան այդ նահասակ Եկեղեցի'ն է որ կը ներկայացնէք Փորձոյդ մէջ. յարատեւեցէ՛ք ու մի վհատիք:

Ես, իմովսանն, այս օրուրնէ իսկ, կարեւոր պարտք մը կը համարիմ ինձ՝ աշխատակցիլ Ձեզ. իբրեւ չնչին լուծայ մը նուիրելով ի'նչ որ ունիմ Ձեր արդիւնաւոր խմբագրութեան՝ «Հայ Եկեղեցի»ի գանձանակին, եւ յուսալից եմ որ՝ ինձ պաշտօնակից Սրբազան Հարք եւ Եղբարք եւս, պիտի փութան նոյնն ընել՝ իրենց յաւելուածները նուիրելով անոր: Ինչու՞ չաշխատակցինք Ձեզ. — Դուք ըրիք ու կ'ընէք ի'նչ որ մեզ անկ էր ընել ու չ'ըրինք, եւ կամ, ըրինք... Ձեր ըրածը խափանելու համար միայն ու դադրեցանք ընելէ:

Համակրանօք ողջունելով զՍիրելի Հայրութիւնդ, մնամ Ձեզ նուիրական եւ աղօթակից,

ՂԵՒՈՆԴ ԵՄԻՍԿՈՊՈՍ ԾԵՄԱՆԵԱՆ

# ՄՐՑԱՆԱԿ

Կրօնագիտութեան ուսումն քաջալերելու մտօք իմբազրութիւնս որոշած է ժամանակ առ ժամանակ նուէրներ տալ՝ մեր առաջարկեալ նիւթոց վերայ գրուած լաւագոյն յօդուածոց համար:

Ըստ այսմ յառաջիկայ Մայիսին քսան եւ հինգ ֆրանքի (25) արժողութեամբ գրքեր պիտի զրկուին այն անձին որ ամենէն լաւ յօդուածը զրկէ իմբազրութեանս՝ Ս. Մատթէոսի Աւետարանի վերայ: Գրոց ընտրութիւնը մրցանակը տանողին կը պատկանի, որ կրնայ իւր ուղածն ընտրել և պահանջել, պայմանաւ որ 25 ֆրանքէ աւելի զին չուեննան ցանկացած գրքերն:

Յիշեալ յօդուած պէտքը է զրկուի իմբազրութեանս մինչև Ապրիլ 15 (ն. տ.) և պէտք է պարունակէ ոչ պակաս քան 1,300 և ոչ աւելի քան 1,500 բառ:

Յօդուածը պէտք է մաքուր թուղթի վերայ շատ պարզ գրով գրուած լինի, օրինակի համար ո և ս, ի և ե, դ և ջ, զ կամ ը, ղ և շ, և այլն, իրարմէ տարբեր և պարզ գիծերով գրուին, շատ փոփոխութիւններով և սրբագրութիւններով շխառնուին բառերն. գլխագիրներն՝ մանր կամ բոլոր գիրերէն պարզապէս որոշուին. լեզուի և կէտադրութեան մեծ խնամք տարուի, այնպէս որ առանց որ եւ է փոփոխութեան կարելի լինի ձեռագիրն, ի գէպս յաջողութեան, յանձնել ի տպագրութիւն:

Ամենէն լաւ յօդուածն Մայիսի թուոյն մէջ կը հրատարակուի, և յետ այնորիկ մրցանակը շահողն իրաւունք կուեննայ իւր սիրած գրքերը պահանջելու:

Մատթէոսի Աւետարանի վերայ գրուածն պէտք է պարունակէ ոչ թէ իրատական կամ քարոզի ձևով բան մի, այլ ներածական լուրջ հետազոտութիւն հետեւեալ և յարակից խնդրոց վերայ:—

1. Աւետարանիս գլխաւոր բաժանումներն և առանձնայատկութիւնք:
2. Աղբիւրներն:
3. Հեղինակն:
4. Նախկին լեզուն որով Աւետարանս գրուեցաւ:
5. Նախկին և անմիջական նպատակ Ս. Աւետարանիս:
6. Ու՞ր գրուեցաւ:
6. Ե՞րբ գրուեցաւ:
8. Մատթէոսի կենաց գլխաւոր պարագայք:
9. Աւետարանի մէջ տիրող վարդապետական ոգին որով կ'որոշուի միւս Աւետարաններէն:
10. Աւետարանիս ընթերցուածոց գլխաւոր տարբերութիւնք:

Այս մրցումն բաց է ամեն հայախօս անձին, առանց տարեաց, աստիճանի կամ որևիցէ ուրիշ խտրութեան:



